



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

№ 68 - Ն

«30 հոկտեմբեր» 2022

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 7-ՐԴ ԵՎ 10-ՐԴ
ՂԱՍԱՐԱՆՆԵՐԻ «ԱՐՎԵՍ» ԻՆՏԵԳՐՎԱԾ ԱՌԱՐԿԱՅԻ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում «Արվեստ» ինտեգրված առարկայի 7-րդ և 10-րդ դասարանների ծրագրերը՝ համաձայն հավելվածի:

X

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 190962021



Վ. ԴՈՒՄԱՆՅԱՆ

Հավելված

**ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2022 թվականի նոյեմբերի 30-ի N 68 Ն հրամանի**

**ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ «ԱՐՎԵՍ» ԻՆՏԵԳՐՎԱԾ ԱՌԱՐԿԱՅԻ 7-ՐԴ և 10-ՐԴ
ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐ**

7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ԳԵՂԱՐԿԵՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	
ՆՅՈՒԹԵՐ, ՄԻՋՈՑՆԵՐ	
Նպատակը	Վերջնարդյունքներ
<p>Ստեղծագործական աշխատանքներում կյուբեր, մեթոդներ և միջոցներ փորձարկելու կարողությունների ձևավորում:</p> <p>Թեմայով պայմանավորված՝ կյուբերի ճիշտ ընտրության կարողությունների ձևավորում:</p>	<p>7.Ա.Ս.ՆՄ.1. Ուսումնասիրել արվեստի տարբեր ուղղությունները, կյուբերն ու մոտեցումները տարբեր բովանդակությամբ ստեղծագործական աշխատանքներ ստեղծելիս:</p> <p>7.Ա.Ս.ՆՄ.2. Պատրաստել պաստառներ արվեստի տարրերի և սկզբունքների վերաբերյալ:</p> <p>7.Ա.Ս.ՆՄ.3. Հոգ տանել կյուբերի և գործիքների, բեմական հագուստների, պարագաների, սվագարանների մասին, պահպանել անվտանգության կանոնները:</p>
<p>Ուղղորդող հարցադրում</p> <p>Ինչպե՞ս են արվեստագետները նախապատրաստվում, ի՞նչ գործիքներ և միջոցներ են օգտագործում:</p> <p>Ինչպե՞ս են արվեստագետները նախապատրաստվում ստեղծագործական գործընթացին:</p> <p>Պահպանո՞ւմ են արդյոք արվեստագետները որոշակի կանոններ:</p>	<p>7.Ա.Ս.ՆԵ.1. Արվեստի ստեղծագործությունը ներկայացնել նորարարական մոտեցումներով (2D, 3D, 4D, նոր ռիթմական սվագակցությամբ, գրավոր, բանավոր, մեջախաղ):</p> <p>7.Ա.Ս.ՆԵ.2. Ստեղծել վերացական արվեստի աշխատանքներ (2D, 3D, 4D, գրավոր, բանավոր, մեջախաղ):</p> <p>7.Ա.Ա.ՔԱ.2. Մեկնաբանել և վերլուծել արվեստի ստեղծագործությունները:</p>
<p>Դասընթացի ուսումնասիրության արդյունքում սովորողը կկարողանա՝</p>	
<ol style="list-style-type: none"> 1. Չարգացնել գաղափարը՝ աշխատել թեմայի մշակման, Էսքիզների կատարման ուղղությամբ: 2. Տարբեր գործիքներով և միջոցներով հասնել առավել արտահայտչականության: 3. Ընտրել թեմայի համապատասխան առավել արդյունավետ գործիքներ: 4. Պատկերացնել, հետազոտել, համադրել, հակադրել, արտահայտել նախագծի հիմնական գաղափարները: 5. Կազմել նախագծի գործողությունների պլան, որոշել կյուբը, մատուցման ձևը/ձևերը: 6. Հավաքել օգտակար տեղեկատվություն, ձևակերպել խնդիրը, ստեղծել նախնական տարբերակ, ընտրել այլընտրանքային տարբերակ: 7. Կատարել արվեստագիտական եզրույթների խմբավորում՝ ըստ առաջադրված չափանիշների: 8. Կատարել ստեղծագործական գործունեությանն առնչվող եզրույթների մասնագիտական վերլուծություններ, թարգմանություններ: 9. Ստեղծել եզրույթերը ներկայացնող պաստառներ՝ պահպանել տառերի և բառերի ներկայացման համաչափությունները, պահպանել դեկորատիվ արտահայտչականությունը, 10. Պահպանել աշխատանքի անվտանգության կանոնները: 11. Ճիշտ կազմակերպել աշխատանքային տարածքը, աշխատանքի բոլոր փուլերում պահպանել հիգիենայի, անձնական տարածքի 	

կանոնները:

12. Աշխատանքներում պահպանել ընտրված նյութերով գրագետ աշխատելու օրինաչափությունները:
13. Համագործակցել ընդհանուր աշխատանքային տարածքում:
14. Ցուցադրել ստեղծագործական մտածողություն և գեղարվեստական միտք:
15. Ցուցադրել կատարողական վարպետություն և ինքնավստահություն:
16. Ցուցադրել պատկերային մտածողության հմտություններ:
17. Ստեղծել երևակայության և զգացմունքների վրա հիմնված աշխատանքներ, պահպանելով իմպրովիզացիայի կամ վարիացիայի սկզբունքները:
18. Ստեղծել տարբեր ժամանակաշրջանների բնական միջավայրին, հասարակական, տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացումներին վերաբերող արտահայտիչ երևակայական աշխատանքներ,
19. Ստեղծել զգացմունքների վրա հիմնված աշխատանքներ, որոնք արտահայտում են տրամադրություն, զգացմունք կամ անձնապես կրած հուզական վերաբերմունք:
20. Վերլուծել աշխատանքները, մեկնաբանել կիրառված ստեղծագործական հնարները:
21. Վերլուծել ստեղծագործության տարբեր մեկնաբանություններ:
22. Բացահայտել և եզրակացություններ անել տվյալ ստեղծագործության մեջ կիրառված նորարարությունների վերաբերյալ:

Բովանդակություն	Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող հասկացություններ
<p>Գործիքների և նյութերի ճիշտ ընտրությունն՝ ըստ թեմայի:</p> <p>Բովանդակության մատուցումը տարբեր արտահայտչամիջոցներով, նյութերով և մոտեցումներով՝ 2D, 3D, 4D, գրավոր, բանավոր, մնջախաղ և այլն:</p> <p>Արվեստագիտական եզրույթներ:</p> <p>Նյութերի, գործիքների, բեմական հագուստների, պարագաների, նվագարանների նկատմամբ հոգատար վերաբերմունք և անվտանգ օգտագործում:</p>	<ol style="list-style-type: none"> 1. Ուսումնասիրել և փորձարկել թեմայի մեկնաբանության տարբեր մոտեցումներ: 2. Թեման մեկնաբանել՝ <ol style="list-style-type: none"> 1) երգիծական, 2) -դրամատիկ, 3) մարդասիրական, 4) -դեկորատիվ, 5) -տեքստային, 6) -մանկական, 7) -քաղաքական երանգավորումներով: 3. Կրկնօրինակել արվեստի որևէ ստեղծագործություն՝ պահպանելով նյութերի, մատուցման միջոցների նույնակա- նությունը: 4. Կրկնօրինակել արվեստի որևէ ստեղծագործություն՝ պահպանելով նյութերի, մատուցման միջոցների բազմազա- նությունը: 	<p>Պատճառ և հետևանք</p> <p>Աշխատանքի բնույթ և արդյուն- ք կապը. նյութը, չափը, խնդիրը, թեմաներն ազդում են աշխա- տանքի բնույթի վրա, ինչը տար- բեր արդյունքներ է տալիս:</p> <p>Օրինաչափություն</p> <p>Երևույթների միջև օբյեկտի- վորեն գոյություն ունեցող պատճառահետևանքային ան- հրաժեշտ կապեր:</p> <p>Որևէ երևույթի պատմական զարգացման մեջ դրսևորվող (դրսևորված) փաստ և դրա</p>

	<ol style="list-style-type: none"> 5. Ներկայացնել արվեստի տարբեր ճյուղերում նյութերի կիրառման հնարավորություններն ու սկզբունքները: 6. Գեղարվեստական հնարքների ուսումնասիրություն. ֆակտուրա, ամբողջականություն, արտասովորություն, գեղագիտական կողմ և այլն: 7. Ներկայացնել թեմայի սեփական մեկնաբանությունը, կիրառել տեխնիկական/մեղիա տարբեր միջոցներ գաղափարներն այլ լուծումներով ներկայացնելու նպատակով: 8. Կատարել էսքիզներ միևնույն թեման տարբեր միջոցներով ներկայացնելու նպատակով: 9. Կատարել էսքիզներ միևնույն տեխնիկական միջոցներով տարբեր թեմաներ ներկայացնելու նպատակով: 10. Ուսումնասիրել և բացահայտել այն հիմնական տարրերը, որոնք կողմնորոշում են արվեստի տվյալ տեսակը: 11. Արտապատկերել ստեղծագործությունները՝ պահպանելով ոճային, տեխնիկական օրինաչափությունները և հիմնական նյութը: 12. Պլակատային գրաֆիկայի կոմպոզիցիայի, թեմատիկ և բովանդակային կառուցվածքի ուսումնասիրություն: 13. Ուսումնասիրել և վերլուծել ստեղծագործությունները բոլոր ուղղություններով՝ թեմա/սցենար, գործող անձինք/կերպարներ, կառուցվածք/ձև, ընտրված նյութեր, մատուցման արդյունավետություն և այլն: 14. Կատարել փորձարկումներ պատկերի, նյութի, ձայնի, լույսի և գույնի հետ: 15. Պատրաստել մասնագիտական պաստառներ: Նյութերի և միջոցների խնայողություն: 	<p>հետևանքը՝ արդյունքը:</p> <p>Մասշտաբ, համամասնություն, քանակ</p> <p>Մասշտաբները փոխվելիս փոխվում են պատկերների չափերը, սակայն համամասնությունը պահպանվում է, ինչպես օրինակ՝ բնօրինակից պատկերման աշխատանքներում:</p>
--	---	---

Առաջարկվող թեմաներ

Ճանապարհորդություն աշխարհի շուրջը: Մշակույթ առանց սահմանների:

Նորածնություն: Արտ դեկո զարդեր և ոսկերչություն:

Արվեստի ստեղծագործությունների կրկնօրինակումներ: Սերգեյ Փարաջանով: Հայկական զարդարվեստ:

Արվեստների դերը մարդու իրավունքների համատեքստում: Բնապահպանություն:

Տիեզերք, Տարածություն:

Դիմանկար, Ինքնանկար, Բնանկար, Ճեպանկար, Ծաղրանկար, Նատյուրմորտ, կոլաժ, մոնտաժ, ֆրոնտաժ, Էսքիզներ, փուլային ավարտուն աշխատանքներ:

Միջառարկայական կապ

Հայոց լեզու և գրականություն - մեկնաբանել տարաբնույթ նշանները, համադրել, փոփոխել: Ստեղծել բանավոր և գրավոր պատկերավոր խոսք (առանձին և խմբային), արձակ և չափածո պատմություններ՝ օգտագործելով տարաբնույթ նշաններ (կոմիքս, Էմոջի, ծաղրանկար և այլն):

Երկրաչափություն - սահմանել հավասար պատկերներ հասկացությունը և կիրառել հատվածների, անկյունների ու եռանկյունիների համար:

Ֆիզիկա - կատարել պարզագույն դիտումներ, չափումներ և փորձեր: Հանդուրժողական վերաբերմունք ցուցաբերել չափումների և փորձերի տարբերվող արդյունքների կամ մեկնաբանությունների դեպքում:

Քիմիա - ֆիզիկական և քիմիական երևույթներ, համապատասխան հատկանիշներ:

Կենսաբանություն - հետազոտություններ կատարելով՝ ձեռք բերել ապացույցներ:

Աշխարհագրություն - տեղանքի մոտավոր հատակագիծ, համապատասխան պայմանական նշաններ:

Ֆիզկուլտուրա - դրսևորել ինքնավստահության, նպատակասլացության, ինքնագնահատման և դժվարությունները հաղթահարելու հմտություններ:

Պատմություն, Հասարակագիտություն - ըմբռնել իր և սերունդների կապը պատմության մեջ, բացահայտել պատմական փորձի յուրացման ու հաջորդ սերունդներին փոխանցման անհրաժեշտությունը: Աղբյուրագիտական հենքով վերլուծել առկա տեղեկույթը, համադրել փաստերն ու իրադարձությունները, եզրակացություններ անել:

Առողջ ապրելակերպ - հարմարավետ զգալ սեփական մարմնում և հարգել ուրիշների մարմնակառուցվածքը:

Ինֆորմատիկա - հաղորդակցման մի շարք ձևերի կիրառություններ (սորությունների թերթիկներ, վեբկայքեր, բազմամեդիա պրեզենտացիաներ, երաժշտության գնահատման հարթակներ, մուլտֆիլմեր, թռուցիկներ և պաստառներ): Համակարգչի օգտագործման հետ կապված առողջությանն ու ապահովությանն առնչվող խնդիրներ:

Օտար լեզուներ - հասկանալ և հետևել պարզ ցուցումներին ու հրահանգներին՝ բազմաքայլ գործողություններ կատարելիս, եթե դրանք տրվում են գրական/ստանդարտ լեզվով և ծանոթ առոգանությամբ:

Կապը ՀԴԶ վերջնարդյունքների հետ

Հ2, Հ4, Հ5, Հ8, Հ9, Հ13, Հ25, Հ27, Հ29, Հ33, Հ43, Հ44

**ԳԵՂԱՐԿԵՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ
ԱՐԿԵՍՏԻ ՏԱՐԲԵՐ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ**

Նպատակը	Վերջնարդյունքներ
<p>Ձևավորել՝</p> <ol style="list-style-type: none"> 1. ուսումնասիրելու, փորձարկելու, ստեղծագործական աշխատանքներ կատարելու հմտություններ: 2. ստեղծագործական աշխատանքներում կերպարվեստի տարրերն ու սկզբունքները կիրառելու կարողություններ 	<p>7.Ա.Ս.ՆՄ.1. Ուսումնասիրել արվեստի տարբեր ուղղությունները, կյուլթերն ու մոտեցումները տարբեր բովանդակությամբ ստեղծագործական աշխատանքներ ատեղծելիս:</p> <p>7.Ա.Ս.ՆՄ.2. Պատրաստել պաստառներ արվեստի տարրերի և սկզբունքների վերաբերյալ:</p> <p>7.Ա.Ս.ՆՄ.3. Հոգ տանել կյուլթերի և գործիքների, բեմական հագուստների, պարագաների, նվագարանների մասին, պահպանել անվտանգության կանոնները:</p> <p>7.Ա. Ս.ԱՏ.1. Ստեղծագործական աշխատանքներում կիրառել արվեստի տարրեր և արտահայտչամիջոցներ:</p> <p>7.Ա. Ս.ԱՏ.2. Ստեղծագործական աշխատանքներում կիրառել գաղափարն արվեստի լեզվով փոխանցելու հմտություններ:</p> <p>7.Ա. Ս.ՆԵ.1. Արվեստի ստեղծագործությունը ներկայացնել նորարարական մոտեցումներով (2D, 3D, 4D, նոր ռիթմական նվագակցությամբ, գրավոր, բանավոր, մեջախաղ):</p> <p>7.Ա. Ս.ՆԵ.2. Ստեղծել վերացական արվեստի աշխատանքներ (2D, 3D, 4D, գրավոր, բանավոր, մեջախաղ):</p>
<p>Ուղղորդող հարցադրում</p>	
<p>Ինչպե՞ս են արվեստագետներն աշխատում:</p> <p>Ի՞նչ է հարկավոր իմանալ գրագետ աշխատելու համար:</p> <p>Պահպանո՞ւմ են արդյոք արվեստագետները որոշակի օրինաչափություններ:</p> <p>Ե՞րբ և ի՞նչ նպատակով կարելի է խախտել օրինաչափությունները:</p>	
<p>Դասընթացի ուսումնասիրության արդյունքում սովորողը կկարողանա՝</p>	
<ol style="list-style-type: none"> 1. Չարգացնել գաղափարը, աշխատել թեմայի մշակման, էսքիզների կատարման ուղղությամբ: 2. Տարբեր գործիքներով և միջոցներով հասնել առավել արտահայտչականության: 3. Ընտրել թեմային համապատասխան առավել արդյունավետ գործիքներ: 4. Պատկերացնել, հետազոտել, համադրել, հակադրել, արտահայտել նախագծի հիմնական գաղափարները: 5. Կազմել նախագծի գործողությունների պլան, որոշել կյուլթը, մատուցման ձևը/ձևերը: 6. Հավաքել օգտակար տեղեկատվություն, ձևակերպել խնդիրը, պատրաստել նախնական տարբերակ, ստեղծել այլընտրանքային տարբերակ: 7. Կատարել արվեստագիտական եզրույթների խմբավորում, ըստ առաջադրված չափանիշների 8. Կատարել ստեղծագործական գործունեությանն առնչվող եզրույթների մասնագիտական վերլուծություններ, թարգմանություններ: 9. Ստեղծել եզրույթները ներկայացնող պաստառներ՝ պահպանել տառերի և բառերի ներկայացման համաչափությունները, պահպանել դեկորատիվ արտահայտչականությունը: 10. Պահպանել աշխատանքի անվտանգության կանոնները: 	

11. Ճիշտ կազմակերպել աշխատանքային տարածքը, աշխատանքի բոլոր փուլերում պահպանել հիգիենայի, անձնական տարածքի կանոնները:
12. Աշխատանքներում պահպանել ընտրված նյութերով գրագետ աշխատելու օրինաչափությունները:
13. Համագործակցել ընդհանուր աշխատանքային տարածքում:
14. Բանավոր կամ գրավոր մեկնաբանել և թվարկել արվեստի տարրերն ու սկզբունքներն առաջարկված ստեղծագործություններում, դրանց ազդեցությունն ու նշանակությունը հիմնական գաղափարի նկատմամբ:
15. Ստանալ ճանաչելի հորինվածքներ՝ ապահովելով ռիթմ, շարժում, հավասարակշռություն, ազդեցություն, ներդաշնակություն, համաչափություն և զանազանություն:
16. Կիրառել երանգներ՝ աշխանանքներին հուզականություն հաղորդելու համար:
17. Կատարել հայտնի ստեղծագործությունների կրկնօրինակներ՝ արվեստի տարրերն ու սկզբունքներն առավել արտահայտիչ ներկայացնելով:
18. Ստեղծել աշխատանքներ՝ պահպանելով հայկական/ազգային ավանդական մոտիվները:
19. Ստեղծել աշխատանքներ՝ հայկական/ազգային ավանդական տարրերը համադրելով համաշխարհային արվեստի ստեղծագործությունների հետ:
20. Ստեղծել աշխատանքներ՝ հայկական/ազգային ավանդական տարրերը ինտեգրելով համաշխարհային արվեստի ստեղծագործությունների հետ:
21. Ստեղծել աշխատանքներ՝ համաշխարհային արվեստի ստեղծագործությունները ներկայացնելով հայկական/ազգային ավանդական տարրերով:
22. Ստեղծագործական աշխատանքներում ցուցադրել զգացմունքայնություն և վերաբերմունք:
23. Ստեղծել աշխատանքներ՝ օգտագործելով կենդանական կամ բուսական մոտիվներ:
24. Ստեղծել աշխատանքներ՝ արվեստի հայտնի ստեղծագործությունները ներկայացնելով նորարարական մոտեցումներով:
25. Ստեղծել աշխատանքներ, ցուցադրելով ինքնուրույն աշխատելու, ստեղծագործական և քննական մտածողության հմտություններ:

Բովանդակություն	Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող հասկացություններ
<p>Արվեստի տարրերի և արտահայտչամիջոցների գրագետ կիրառում:</p> <p>Թատերական, պարային, երաժշտական արտահայտչամիջոցների ինտեգրում:</p>	<p>Կատարել ստեղծագործական աշխատանքներ՝ արվեստի տարրերը գրագետ ինտեգրելով թատրոնի, կինոյի, օպերային արվեստի ստեղծագործություններում, վերաիմաստավորելով կամ նոր ընդգծված գաղափար հաղորդելով հայտնի ստեղծագործություններին:</p> <p>Կատարել հետազոտական աշխատանքներ՝ վեր հանելով արվեստի տվյալ տեսակում կիրառված հիմնական տարրերն ու սկզբունքները:</p>	<p>Մասշտաբ,</p> <p>համամասնություն, քանակ</p> <p>համամասնության ու քանակի պատկերացումները սովորողին կօգնեն հասկանալու իր կատարած աշխատանքի ծավալը, հարկ եղած դեպքերում համեմատություններ, վերլու-</p>

Չետագոտել տարբեր մշակույթների ավանդական, պատմական ձևերի փոխակերպումները արվեստում (պար, մեդիա, վիրտուալ արվեստ, թատրոն, երաժշտություն, օպերային արվեստ, կերպարվեստ, լուսանկար, ԴԿԱ և այլն):

Ուսումնասիրել մետադի գեղարվեստական մշակման առանձնահատկությունները, կնիքները և դրանց նշանակությունը: Կատարել ստեղծագործական տարբեր աշխատանքներ՝ անձնական, ազգային, համամարդկային խնդիրները վերծանելով արվեստի տարբեր տեսակներում, ընտրելով համապատասխան կյուբը, տեխնոլոգիան, մեդիան և այլն:

Կատարել գեղարվեստական գրականության պատկերազարդումներ:

Ուսումնասիրել տեսողական, լսողական, սինթեզված արվեստի տեսակները:

Ստեղծագործական աշխատանքներում հիմնական գաղափարն արտահայտելիս կիրառել արվեստի հիմնական տարրերն ու սկզբունքները:

Ուսումնասիրել արվեստի այն ստեղծագործությունները, որոնք ընդհանուր են իրենց գաղափարով, մոտեցումներով, անվանումով, ժամանակաշրջանով, ոճով, ժանրով և այլն:

Չամադրել միևնույն գաղափարներն արտահայտող ստեղծագործությունները՝

1. լուսանկար և կերպարվեստ
2. երաժշտություն և կերպարվեստ,
3. կինոֆիլմ և երաժշտություն

-ճարտարապետություն և լուսանկարչություն:

Ինտեգրել արվեստի մի քանի տեսակներ՝ պահպանելով արվեստի տարրերից և սկզբունքներից մեկը՝

1. գաղափարը,
2. ոճի թմր,
3. ոճը,

ծություններ կատարել:

Չամակարգ և մոդել
 Չամակարգին հատուկ է որոշակի կայունություն և հարաբերական ինքնուրույնություն, որով հանդես է գալիս ավելի մեծ համակարգի շրջանակում՝ ենթահամակարգի կարգավիճակով:

Չամակարգերի և մոդելների շուրջ քննարկումներն առավել արդյունավետ են ստեղծագործական նախագծերի իրականացման ժամանակ:

	<p>4. ժամանակաշրջանը, 5. անվանումը և այլն:</p> <p>Ուսումնասիրել դիզայնի/ձևավորման աշխատանքները, և դրա անմիջական կապը իրականության հետ:</p> <p>Միջավայրի (ինտերիեր, էքստերիեր) ձևավորման, ոճավորման և հարդարման տեխնիկական և գեղարվեստական մեթոդների բնութագրում:</p> <p>Դիզայնի տարրերը ԴԿԱ-ում:</p> <p>Կատարվող աշխատանքի փուլային հաջորդականության նկարագրություն:</p> <p>Շրջապատում, բնության մեջ, արվեստի ստեղծագործություններում և ճարտարապետական կոթողներում ձևերի և պատկերների տեսակների բացահայտում, պատկերում և համադրում:</p> <p>Գույների միջոցով դեկորատիվ, արտահայտիչ աշխատանքների կատարում:</p> <p>Չեռանկարի օրենքների դասակարգում և կիրառում:</p> <p>Տարբեր երկրների դեկորատիվ արվեստի նմուշների կրկնօրինակումներ և համեմատություններ:</p>	
Առաջարկվող թեմաներ		
<p>Հանրամատչելի երաժշտություն, Հայ ազգային երգեր և պարեր Գրաֆֆիտի, Հիերոգլիֆ, Էքսլիբրիս, Հերալդիկա, Կնիք, Անիմացիա, Տոտեմ, Խաչքար, Գունային անիվ, Մանդալա, Ֆրակտալներ, Հայկական ծեսեր Իմպրեսիոնիզմ, Էքսպրեսիոնիզմ Ինտերակտիվ խաղեր, Օդապարուկներ:</p>		
Միջառարկայական կապ		

Չայոց լեզու և գրականություն - ստեղծել տարաբնույթ ուսումնական/ցուցադրական նյութեր՝ պաստառ, գրքույկ, ուղեցույց, սահիկաշար, անիմացիա, տեսանյութ և այլն: Կարդացած ստեղծագործություններից ընտրել պատմողներ (նարատորներ) և ստեղծել վերջիններիս բնավորությունն ու արտաքին հատկանիշներն արտահայտող նկարագրություններ:

Երկրաչափություն - սահմանել հավասար պատկերներ հասկացությունը և կիրառել հատվածների, անկյունների ու եռանկյունիների համար: Կառուցել, նաև դինամիկ մաթեմատիկայի ծրագրերով, տրված պատկերի համաչափ պատկեր:

Ֆիզիկա - կատարել պարզագույն դիտումներ, չափումներ և փորձեր: Դասակարգել նյութերը՝ ըստ ազդեցատային վիճակների, վերլուծել տարբեր վիճակներում նյութի հատկությունները և կառուցվածքային տարբերությունները:

Քիմիա - քիմիական տարրի էներգետիկ մակարդակների թվի կապը պարբերության համարի հետ:

Կենսաբանություն - հետազոտություններ կատարելով՝ ձեռք բերել ապացույցներ: Մոդելների, նկարների, սխեմաների, տեսանյութերի միջոցով մեկնաբանել վերլուծիչների աշխատանքի սկզբունքները՝ հղում կատարելով տեսողական, լսողական զգայարանների հիմնական կառուցվածքային և գործառնական առանձնահատկություններին:

Աշխարհագրություն - տեղանքի մոտավոր հատակագիծ, համապատասխան պայմանական նշաններ: Ձևավորել հավասարակշռված կարծիք աշխարհագրական գործոններով պայմանավորված էթնոմշակութային և այլ առանձնահատկությունների վերաբերյալ:

Ֆիզիկոլոգիա - դրսևորել ինքնավստահության, նպատակասլացության, ինքնագնահատման և դժվարությունները հաղթահարելու հմտություններ: Պասիվ շարժունակության հետևանքները և օրգանիզմի վրա բացասական ազդեցությունները:

Պատմություն, Հասարակագիտություն - ըմբռնել իր և սերունդների կապը պատմության մեջ, բացահայտել պատմական փորձի յուրացման ու հաջորդ սերունդներին փոխանցման անհրաժեշտությունը: Դրսևորել խնդիրներ և հարցեր ձևակերպելու, անհատական և խմբային նախագծեր իրականացնելու հմտություններ: Օգտագործել քարտեզներ, ուսումնասօժանող գրականություն, դրսևորել հետազոտելու կարողություն, մշակել և իրականացնել նախագծեր, հետազոտական աշխատանքներ:

Առողջ ապրելակերպ - տարբերել անձի, հասարակության շահերը պաշտպանող, չվնասող, ընդհանուրի բարօրությունից բխող ենթամշակույթը մասնավոր շահեր սպասարկող ենթամշակույթներից:

ԹԳՉԳ - հաղորդակցման մի շարք ձևերի կիրառություններ (տրոլոյունների թերթիկներ, վեբկայքեր, բազմամեդիա պրեզենտացիաներ, երաժշտության գնահատման հարթակներ, մուլտֆիլմեր, թռուցիկներ և պաստառներ): Անհատապես կամ համագործակցությամբ ստեղծել արտեֆակտ, որը պատասխանում է հետազոտական հարցին և ներկայացնում է արդյունքներն ու եզրահանգումները:

Օտար լեզուներ - նկարագրել իրադարձություններ, իր կենսափորձը, հույսերն ու ձգտումները՝ գործածելով պարզ կապակցված արտահայտություններ:

Կապը ՅՊԶ ի հետ

Յ2, Յ4, Յ8, Յ9, Յ23, Յ25, Յ27, Յ29, Յ43, Յ44

**ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ
ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ**

Նպատակը	Վերջնարդյունքներ
<p>Ձևավորել իրատեսական, վերացական և երևակայական աշխատանքներ կատարելու հմտություններ: (2D, 3D, 4D, գրավոր, բանավոր, մեջախաղ):</p>	<p>7.Ա.Ս.ՆԱ.1. Ուսումնասիրել արվեստի տարբեր ուղղությունները, նյութերն ու մոտեցումները տարբեր բովանդակությամբ ստեղծագործական աշխատանքներ ատելծելիս:</p> <p>7.Ա.Ս.ՆԱ.3. Հոգ տանել նյութերի և գործիքների, բեմական հագուստների, պարագաների, նվագարանների մասին, պահպանել անվտանգության կանոնները:</p> <p>7.Ա. Ս.ՆԵ.1. Արվեստի ստեղծագործությունը ներկայացնել նորարարական մոտեցումներով (2D, 3D, 4D, նոր ռիթմական նվագակցությամբ, գրավոր, բանավոր, մեջախաղ):</p> <p>7.Ա. Ս.ՆԵ.2. Ստեղծել վերացական արվեստի աշխատանքներ (2D, 3D, 4D, գրավոր, բանավոր, մեջախաղ):</p> <p>7.Ա. Ա.ՔԱ.2. Մեկնաբանել և վերլուծել արվեստի ստեղծագործությունները:</p>
<p>Ուղղորդող հարցադրում</p> <p>Ինչպե՞ս են արվեստագետները ստեղծագործում Ինչպե՞ս են արվեստագետները կռահում. որ աշխատանքը հաջողված է: Կարելի՞ է արդյոք սովորել սեփական սխալներից: Հնարավոր է պատկերել զգացողություն:</p>	
<p>Դասընթացի ուսումնասիրության արդյունքում սովորողը կկարողանա՝</p>	
<ol style="list-style-type: none"> 1. Չարգացնել գաղափարը, աշխատել թեմայի մշակման, էսքիզների կատարման ուղղությամբ: 2. Տարբեր գործիքներով և միջոցներով հասնել առավել արտահայտչականության: 3. Ընտրել թեմային համապատասխան առավել արդյունավետ գործիքներ: 4. Պատկերացնել, հետազոտել, համադրել, հակադրել, արտահայտել նախագծի հիմնական գաղափարները: 5. Կազմել նախագծի գործողությունների պլան, որոշել նյութը, մատուցման ձևը/ձևերը: 6. Հավաքել օգտակար տեղեկատվություն, ձևակերպել խնդիրը, ստեղծել նախնական տարբերակ, ընտրել այլընտրանքային տարբերակ: 7. Պահպանել աշխատանքի անվտանգության կանոնները: 8. Ճիշտ կազմակերպել աշխատանքային տարածքը, աշխատանքի բոլոր փուլերում պահպանել հիգիենայի, անձնական տարածքի կանոնները: 9. Աշխատանքներում պահպանել ընտրված նյութերով գրագետ աշխատելու օրինաչափությունները: 	

10. Համագործակցել ընդհանուր աշխատանքային տարածքում:
11. Կատարել ճեպանկարներ և նախանկարներ՝ պաննո ստեղծելու նպատակով:
12. Ցուցադրել ստեղծագործական մտածողություն և գեղարվեստական միտք:
13. Ստեղծել երևակայության և զգացմունքների վրա հիմնված աշխատանքներ, որոնք արտահայտում են տրամադրություն, զգացմունք կամ անձնապես կրած հուզական վերաբերմունք:
14. Ստեղծել տարբեր ժամանակաշրջանների բնական միջավայրի, հասարակական, տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացումներին վերաբերվող արտահայտիչ երևակայական աշխատանքներ:
15. Ստեղծել աշխատանքներ՝ օգտագործելով կենդանական կամ բուսական մոտիվներ:
16. Ստեղծել աշխատանքներ՝ Արվեստի հայտնի ստեղծագործությունները ներկայացնելով նորարարական մոտեցումներով:
17. Ստեղծել աշխատանքներ, ցուցադրելով ինքնուրույն աշխատելու, ստեղծագործական և քննական մտածողության հմտություններ:
18. Ներկայացնել ստեղծագործություններում առկա իմաստային, տեխնիկական, ոճային նրբությունները:
19. Ներկայացնել ստեղծագործական աշխատանքների վրա արտաքին (օտար) և ներքին (տեղական) գործոնների ազդեցությունը:
20. Մեկնաբանել ստեղծագործություններում կիրառված արվեստի հիմնական տարրերն ու սկզբունքները:
21. Ներկայացնել հիմնական գաղափարի մեկնաբանությունները արվեստի ստեղծագործություններում:
22. Վեր հանել արվեստագետի ներկայացրած ուղերձները:
23. Քննարկել և ներկայացնել ստեղծագործությունից ստացած զգացողությունները:

Բովանդակություն	Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող հասկացություններ
<p>Գաղափարի փոխակերպումը արվեստի:</p> <p>Գաղափարի փոխանցումը համապատասխան մեղեդու, խորհրդանիշի կամ շարժումների միջոցով:</p> <p>Թեմատիկ, ժանրային կամ երևակայական հորինվածք: Իրական, վերացական զգացողություններ, երևույթներ, զգացողություններ, հույզեր</p> <p>Դիցաբանական, համամարդկային, կենցաղային թեմաներ:</p>	<p>Դիտման, պատկերացման, հիշողության, գրական ստեղծագործությունների մեկնաբանություններ նոր տեխնիկական միջոցներով: Իրականացնել ստեղծագործական նախագծեր՝ ապահովելով բնագրի/բնօրինակի հետ համապատասխանությունը ըստ՝</p> <ol style="list-style-type: none"> 1. <i>անվանման,</i> 2. <i>ժամանակաշրջանի,</i> 3. <i>կերպարների,</i> 4. <i>ընդհանուր գաղափարի,</i> 5. <i>նյութի,</i> 6. <i>մատուցման ձևի,</i> 7. <i>լուսավորության,</i> 8. <i>արվեստի ուղղության:</i> <p>Առաջադրված թեմայով ավարտուն ինտեգրված աշխատանքի</p>	<p>Պատճառ և հետևանք</p> <p>Մեխանիզմ և կանխատեսում (աշխատանքի բնույթ և արդյունք կապը. նյութը, ծավալը, խնդիրը, թեմատիկական ազդում են աշխատանքի բնույթի վրա, ինչը տարբեր արդյունքներ է տալիս):</p> <p>Օրինաչափություն</p> <p>Կատարել դասակարգումներ, բացահայտել պատկերվող առարկաների նմանություններն ու տարբերու-</p>

<p>Արվեստի ստեղծագործության մեկնաբանություն՝ 2D, 3D, 4D, գրավոր, բանավոր, ժամանակակից մշակումներ, մնջախաղ և այլն:</p> <p>Արվեստի ստեղծագործության մատուցում վերացական արվեստի տեսանկյունից 2D, 3D, 4D, գրավոր, բանավոր, ժամանակակից մշակումներ, մնջախաղ և այլն:</p>	<p>ստեղծում՝ պահպանելով թեմայի, բովանդակության և մատուցման ձևի տրամաբանական կապը:</p> <p>Գեղարվեստական հոսանքների ուսումնասիրության հենքով հորինվածքների ստեղծում (ֆուտուրիզմ, մոդեռն, կլասիցիզմ, սիմվոլիզմ և այլն):</p> <p>Ուսումնասիրել արվեստի այն ստեղծագործությունները, որոնք ընդհանուր են իրենց գաղափարով, մոտեցումներով, անվանումով, ժամանակաշրջանով, ոճով, ժանրով և այլն:</p> <p>Չամադրել միևնույն գաղափարներն արտահայտող ստեղծագործությունները, կատարել ոճավորումներ՝ ռիթմ, տեմպ, ոճ և այլն:</p> <p>Կատարել հայտնի ստեղծագործությունների վերարտադրություններ՝ կիրառելով տվյալ շրջանին բնորոշ հասանելի միջոցները: Կատարել որևէ հայտնի ստեղծագործության բեմականացման գեղարվեստական, նորարարական, ոճավորված նոր մեկնաբանություն:</p> <p>Չետազոտել և համեմատել հայկական և աշխարհի տարբեր ժողովուրդների ազգային հագուստը:</p> <p>Ստեղծել ճարտարապետական կոթողների և հայկական տաճարների վերականգնված 3D մոդելներ:</p> <p>Վերացական, զգացմունքային, երևակայական բնույթի մի քանի ստեղծագործությունների համադրումների փորձեր:</p> <p>Կոմպոզիցիոն երաժշտական, թատերային, պարային, ռիթմիկ աշխատանքներ, երևակայական, գունային մոտիվներով:</p> <p>Ստեղծագործությունների նոր մատուցումներ տարբեր նյութերի վրա՝ թուղթ, կտոր, կավ, լուսանկար, ֆրոնտաժ, կոլաժ, երաժշտական մեկնաբանություններ և այլն:</p> <p>Ինքնուրույն վերաբերմունքի արտահայտում:</p> <p>Կատարել ստեղծագործական աշխատանքներ՝ համադրելով հայտնի ստեղծագործություններն ու ազգային ավանդական մոտիվները՝ 2D, 3D, 4D:</p>	<p>թյունները: Գտնել ներդաշնակություն:</p> <p>Կայունություն և փոփոխություն</p> <p>Կայունությունը միշտ մրցակցող գործոնների հաշվեկշիռն է: Դրա խախտումը համակարգը դուրս է բերում կայուն վիճակից, երբ բացակայում է հետադարձ կապը: Սակայն արվեստագիտական տեսանկյունից կարելի է ընկալել որպես մեկից ավելի համակարգերի առկայություն միևնույն ստեղծագործության մեջ: Այստեղ, մեկ գործոնի փոփոխությունը չի խախտում համակարգը, քանի որ մյուս գործոնն իր վրա է վերցնում ընդհանուր հավասարակշռությունը (գույն, ձայն, դինամիկա և այլն):</p>
---	---	---

Առաջարկվող թեմաներ

Երաժշտական ճաշակ: Կինո՞, թե՞ թատրոն: **Ձայն - բնություն, երաժշտություն, աղմուկ:**
Հայկական տաճար, Տիրամայր, Հեթանոսական աստվածներ՝ Աստղիկ, Վահագն: **Իմ ընկերները: Սուրբ ծնունդ,**
Գանձերի հետևից, Երկրի քաղաքացի, Ես կարող եմ օգնել,
Ծովային, լեռնային, անտառային պատկերներ: Աշխարհի շուրջ:
Բացիկներ՝ թղթային, Էլեկտրոնային, երաժշտական, ծավալային:
Իմ ոճը: Սպորտն իմ կյանքում: Ուղևորություն դեպի անցյալ: Ուղևորություն դեպի ապագա:

Միջառարկայական կապ

Հայոց լեզու և գրականություն - ստեղծել տարաբնույթ ուսումնական/ ցուցադրական նյութեր՝ պատահառ, գրքույկ, ուղեցույց, սահիկաշար, անիմացիա, տեսանյութ /և այլն: Կարծիք հայտնել, պաշտպանել սեփական տեսակետն ու դիրքորոշումը, հիմնավորել այն:
Մեկնաբանել գաղափարը՝ հիմնվելով գրական օրինակների վրա:

Երկրաչափություն - սահմանել հավասար, համագիծ, տարագիծ, համուղղված, հակուղղված, հակադիր վեկտորներ հասկացությունները և կառուցել դրանց օրինակներ նաև դինամիկ մաթեմատիկայի ծրագրերով: Կառուցել, նաև դինամիկ մաթեմատիկայի ծրագրերով, տրված պատկերի համաչափ պատկեր:

Ֆիզիկա - օրինակներով հիմնավորել, որ ձայնային ալիքները տարածվում են տարբեր միջավայրերով: Ռեզոնանս, արձագանք:

Կենսաբանություն - մոդելների, նկարների, սխեմաների, տեսանյութերի միջոցով մեկնաբանել վերլուծիչների աշխատանքի սկզբունքները՝ հղում անելով տեսողական, լսողական զգայարանների հիմնական կառուցվածքային և գործառական առանձնահատկություններին:

Աշխարհագրություն - ձևավորել հավասարակշռված կարծիք, աշխարհագրական գործոններով պայմանավորված, Էթնոմշակութային և այլ առանձնահատկությունների վերաբերյալ:

Ֆիզկուլտուրա - դրսևորել ինքնավստահության, նպատակասլացության, ինքնագնահատման և դժվարությունները հաղթահարելու հմտություններ: Պասիվ շարժունակության հետևանքները և օրգանիզմի վրաբացասական ազդեցությունները:

Պատմություն, Հասարակագիտություն- ըմբռնել իր և սերունդների կապը պատմության մեջ, բացահայտել պատմական փորձի յուրացման ու հաջորդ սերունդներին փոխանցման անհրաժեշտությունը: Դրսևորել խնդիրներ և հարցեր ձևակերպելու, անհատական և խմբային նախագծեր իրականացնելու հմտություններ:

Առողջ ապրելակերպ - տարբերել անձի, հասարակության շահերը պաշտպանող, չվնասող, ընդհանուրի բարօրությունից բխող ենթամշակույթը, մասնավոր շահեր սպասարկող ենթամշակույթներից:

Ինֆորմատիկա - հաղորդակցման մի շարք ձևերի կիրառություններ (նորությունների թերթիկներ, վեբկայքեր, բազմամեդիա պրեզենտացիաներ, երաժշտության գնահատման հարթակներ, մուլտիմիդեր, թռուցիկներ և պատահաներ): Անհատապես կամ համագործակցությամբ ստեղծել արտեֆակտ, որը պատասխանում է հետազոտական հարցին և ներկայացնում է արդյունքներն ու եզրահանգումները:

Օտար լեզուներ -կապակցված խոսքով ներկայացնել պատմության/իրադարձության/ֆիլմի բովանդակությունը՝ արտահայտելով իր վերաբերմունքը դրա նկատմամբ:

Կապը ՀԴԶ վերջնադրույունքների հետ

Հ4, Հ5, Հ9, Հ25, Հ26, Հ27, Հ28, Հ29, Հ33, Հ34, Հ37, Հ45, Հ46, Հ47

**ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒԼԵՈՒԹՅՈՒՆ
ՎԵՐԱՆԱՅՈՒՄ ԵՎ ՑՈՒՑԱԴՐՈՒՄ**

Նպատակը	Վերջնադրույունքներ
<p>Ցուցադրություններ կազմակերպելու հմտությունների ձևավորում:</p> <p>Քննական մտածողության զարգացում:</p> <p>Հետազոտություններ կատարելու հմտությունների ձևավորում:</p>	<p>7.Ա.Ս.ՆՄ.1. Ուսումնասիրել արվեստի տարբեր ուղղությունները, նյութերն ու մոտեցումները տարբեր բովանդակությամբ ստեղծագործական աշխատանքներ ատեղծելիս:</p> <p>7.Ա.Ս.ՆՄ.2. Պատրաստել պաստառներ՝ Արվեստի տարրերի և սկզբունքների վերաբերյալ:</p> <p>7.Ա.Ս.ՆՄ.3. Հոգ տանել նյութերի և գործիքների, բեմական հագուստների, պարագաների, նվագարանների մասին, պահպանել անվտանգության կանոնները:</p>
Ուղղորդող հարցադրում	
<p>Ինչպե՞ս են պահպանվում ստեղծագործությունները:</p> <p>Ովքե՞ր են դրանք հավաքում, պահպանում և ի՞նչ նպատակով:</p> <p>Ի՞նչ չափանիշներով են ընտրվում ստեղծագործությունները:</p> <p>Հարկավո՞ր է արդյոք ցուցադրել աշխատանքները:</p> <p>Ի՞նչ է նշանակում արվեստի ստեղծագործության</p>	<p>7.Ա. Ա.ՎՑ.1. Առաջարկել խմբային և անհատական ելույթների, ցուցադրության թեմաներ կամ սկզբունքներ:</p> <p>7.Ա. Ա.ՎՑ. 2. Առաջարկել խմբային կամ անհատական նախագծերի ներկայացման տարբերակներ:</p> <p>7.Ա. Ա.ՎՑ.3. Պատրաստել նախագծեր և առավել արդյունավետ ցուցադրել</p>

ցուցադրություն կամ ներկայացում:

դրանք:

7.Ա. Ա.ՎՄ.1. Խմբի հետ ընտրել և քննարկել ելույթները, աշխատանքները ցուցադրության համար:

7.Ա. Ա.ՎՄ. 2. Ձևավորել սկզբունքներ միջոցառումներ և ցուցադրություն կազմակերպելիս:

7.Ա. Ա.ԲԱ.1. Կատարել արվեստագիտական հետազոտություն (կերպարվեստ, երաժշտություն, պար, թատրոն):

7.Ա. Ա.ԲԱ.2. Մեկնաբանել և վերլուծել արվեստի ստեղծագործությունները:

7.Ա. Կ.ԱԴ.3. Ներկայացնել ժամանակակից արվեստի դրական կամ բացասական ազդեցությունը առօրյա կյանքում:

Պատրաստի ուսումնասիրության արդյունքում սովորողը կկարողանա՝

1. Չարգացնել գաղափարը՝ աշխատել թեմայի մշակման, էսքիզների կատարման վրա:
2. Տարբեր գործիքներով և միջոցներով հասնել առավել արտահայտչականության:
3. Ընտրել թեմայի համապատասխան առավել արդյունավետ գործիքներ:
4. Պատկերացնել, հետազոտել, համադրել, հակադրել, արտահայտել նախագծի հիմնական գաղափարները:
5. Կազմել նախագծի գործողությունների պլան, որոշել նյութը, մատուցման ձևը/ձևերը:
6. Հավաքել օգտակար տեղեկատվություն, ձևակերպել խնդիրը, ստեղծել նախնական տարբերակ, ընտրել այլընտրանքային տարբերակ:
7. Կատարել արվեստագիտական եզրույթների խմբավորում, ըստ առաջդրված չափանիշների:
8. Կատարել ստեղծագործական գործունեության հետ առնչվող եզրույթների մասնագիտական վերլուծություններ, թարգմանություններ:
9. Ստեղծել եզրույթերը ներկայացնող պաստառներ, պահպանել տառերի և բառերի ներկայացման համաչափությունները, պահպանել դեկորատիվ արտահայտչականությունը:
10. Պահպանել աշխատանքի անվտանգության կանոնները:
11. Ծիշտ կազմակերպել աշխատանքային տարածքը, աշխատանքի բոլոր փուլերում պահպանել հիգիենայի, անձնական տարածքի կանոնները:
12. Աշխատանքներում պահպանել ընտրված նյութերով գրագետ աշխատելու օրինաչափությունները:
13. Համագործակցել ընդհանուր աշխատանքային տարածքում:
14. Մեկնաբանել և տեսակավորել ստեղծագործական աշխատանքները:
15. Ներկայացնել հիմնական գաղափարների արդիականությունը:
16. Առանձնացնել և ցուցադրել ստեղծագործական հնարների կիրառման արդյունավետությունը և ազդեցությունը գաղափարի փոխանցման տեսանկյունից:

17. Առաջարկել և նախաձեռնել աշխատանքների ցուցադրության հետաքրքիր տարբերակներ:
18. Ձևակերպել հարցերը և պատասխանները, թե որտե՞ղ, ե՞րբ, ինչո՞ւ և ինչպե՞ս պետք է ընտրվեն աշխատանքները ցուցադրության համար:
19. Ներկայացնել ստեղծագործություններում առկա իմաստային, տեխնիկական, ոճային նրբությունները:
20. Ճանաչել և մատնանշել արվեստագետի ձեռագիրը:
21. Ձևակերպել արվեստի ստեղծագործության գնահատման տրամաբանված և համոզիչ հիմնավորումներ:
22. Բացահայտել արվեստագետի ստեղծագործական գործունեությանն ուղղված քաղաքական, սոցիալական, մշակութային ազդակները:
23. Ներկայացնել ստեղծագործական աշխատանքների վրա արտաքին (օտար) և ներքին (տեղական) գործոնների ազդեցությունը:
24. Մեկնաբանել ստեղծագործություններում կիրառված արվեստի հիմնական տարրերն ու սկզբունքները:
25. Ներկայացնել հիմնական գաղափարի մեկնաբանությունները արվեստի ստեղծագործություններում:
26. Վեր հանել արվեստագետի ներկայացրած ուղերձները:
27. Զննարկել և ներկայացնել ստեղծագործությունից ստացած զգացողությունները:

Բովանդակություն	Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող հասկացություններ
<p>Խմբային կամ անհատական ելույթների թեմաների մշակում:</p> <p>Ավանդական և ոչ ավանդական մոտեցումներ:</p> <p>Ներկայացման մատուցման գեղագիտական և տեխնիկական չափանիշներ:</p> <p>Մշակութային միջոցառումների ստեղծագործական նախագծեր:</p> <p>Ցուցադրություններ, ելույթներ կամ ներկայացումներ կազմակերպելու այլընտրանքային տարբերակներ:</p>	<p>Կատարված աշխատանքների կամ թեմատիկ առանձին ուղղվածություն պարունակող ստեղծագործությունների կամ նախագծերի ցուցադրություն/ներկայացում:</p> <p>Ստեղծել աշխատանքային տետր կամ պորտֆոլիո:</p> <p>Մենակ կամ խմբով առանձնացնել աշխատանքները՝ ըստ առաջարկված չափանիշների:</p> <p>Ձևակերպել հարցերը և պատասխանները, թե որտե՞ղ, ե՞րբ, ինչո՞ւ և ինչպե՞ս պետք պատրաստվեն աշխատանքները ցուցադրության կամ ներկայացման համար:</p> <p>Մեկնաբանել ստեղծագործություններից ստացած տպավորությունները:</p> <p>Բացատրել, թե ինչո՞ւ են ընտրվել տվյալ աշխատանքները:</p> <p>Նշել և մեկնաբանել ցուցադրության կամ ներկայացման կազմակերպման նպատակները, հիմնական սկզբունքները:</p>	<p>Համակարգ և մոդել</p> <p>Համակարգը՝ որպես ընդհանուր գաղափարով, թեմայով, մոտեցումով կատարված ստեղծագործությունը (ները) ներկայացնելու ընդհանրական մոտեցում, որով յուրաքանչյուր աշխատանք կամ աշխատանքի մաս հանդես է գալիս որպես մոդել:</p> <p>Չարգացում</p> <p>Հավասար հնարավորությունները՝ որպես ինքնադրսևորվելու, քննադատելու, խորհրդակցելու, գնահատելու և ինքնագնահատելու մեխանիզմ, համագործակցության</p>

	<p>Մեկնաբանել սեփական աշխատանքները: Պատրաստել ռուբրիկներ և հարցաշարեր արդյունավետ հետազոտական աշխատանքներ կատարելու համար: Ստեղծել դասակարգիչներ, որի համաձայն՝ կընտրվեն և կառանձնացվեն աշխատանքները: Աշխատել խմբով: Դասընթացների այս ձևը կարող է կազմակերպվել որևէ առարկայի հետ ինտեգրված: Նախագծերի ցուցադրությունների կամ ներկայացումների կազմակերպման ժամանակ հաշվարկել հնարավոր ռեսուրսները (ժամանակ, նյութ, միջոց, տարածք և այլն): Ապահովել պատկերային հաղորդակցության արդյունավետ և դրական միջավայր: Քննարկել ցուցադրությունների կամ ներկայացումների ազդեցության հասցեականությունը:</p>	<p>և հաղորդակցման բանաձևերը:</p>
--	--	----------------------------------

Առաջարկվող թեմաներ

***Տոնակատարություն, Խաղահրապարակ, Միջոցառում այգում, Հատուկ հյուր, Ստեղծագործական լաբորատորիա
Հերոսներ, Հիշողություն, Երագ, Ճարտարապետություն, Նորածնություն, Ազգային տարագ, Տպագրական աշխատանքներ,
Համադարոցական, համայնքային միջոցառումներ, Ժամանակակից հայ կոմպոզիտորների երգարվեստը:***

Միջառարկայական կապ

Հայոց լեզու և գրականություն - ստեղծել տարաբնույթ ուսումնական/ ցուցադրական նյութեր՝ պաստառ, գրքուկ, ուղեցույց, սահիկաշար, անիմացիա, տեսանյութ /և այլն: Կարծիք հայտնել, պաշտպանել սեփական տեսակետն ու դիրքորոշումը, հիմնավորել այն: Մեկնաբանել գաղափարը՝ հիմնվելով գրական օրինակների վրա:

Երկրաչափություն - սահմանել հավասար, համագիծ, տարագիծ, համուղղված, հակուղղված, հակադիր վեկտորներ հասկացությունները և կառուցել դրանց օրինակներ նաև դինամիկ մաթեմատիկայի ծրագրերով: Կառուցել, նաև դինամիկ մաթեմատիկայի ծրագրերով, տրված պատկերի համաչափ պատկեր:

Ֆիզիկա - օրինակներով հիմնավորել, որ ձայնային ալիքները տարածվում են տարբեր միջավայրերով: Ռեզոնանս, արձագանք:

Կենսաբանություն - մոդելների, նկարների, սխեմաների, տեսանյութերի միջոցով մեկնաբանել վերլուծիչների աշխատանքի սկզբունքները՝ հղում կատարելով տեսողական, լսողական զգայարանների հիմնական կառուցվածքային և գործառական առանձնահատկություններին:

Աշխարհագրություն - ձևավորել հավասարակշռված կարծիք, աշխարհագրական գործոններով պայմանավորված, էթնոմշակութային և

<p>այլ առանձնահատկությունների վերաբերյալ</p> <p>Ֆիզկուլտուրա - դրսևորել ինքնավաստահության, նպատակասլացության, ինքնագնահատման և դժվարությունները հաղթահարելու հմտություններ: Պասիվ շարժունակության հետևանքները և օրգանիզմի վրաբացասական ազդեցությունները</p> <p>Պատմություն, Հասարակագիտություն- ըմբռնել իր և սերունդների կապը պատմության մեջ, բացահայտել պատմական փորձի յուրացման ու հաջորդ սերունդներին փոխանցման անհրաժեշտությունը: Դրսևորել խնդիրներ և հարցեր ձևակերպելու, անհատական և խմբային նախագծեր իրականացնելու հմտություններ:</p> <p>Առողջ ապրելակերպ - տարբերել անձի, հասարակության շահերը պաշտպանող, չվնասող, ընդհանուրի բարօրությունից բխող ենթամշակույթը, մասնավոր շահեր սպասարկող ենթամշակույթներից:</p> <p>ԹԳՀԳ - հաղորդակցման մի շարք ձևերի կիրառություններ (նորությունների թերթիկներ, վեբկայքեր, բազմամեդիա պրեզենտացիաներ, երաժշտության գնահատման հարթակներ, մուլտֆիլմեր, թռուցիկներ և պաստառներ): Անհատապես կամ համագործակցությամբ ստեղծել արտիֆակտ, որը պատասխանում է հետազոտական հարցին և ներկայացնում է արդյունքներն ու եզրահանգումները:</p> <p>Օտար լեզուներ -կապակցված խոսքով ներկայացնել պատմության/իրադարձության/ֆիլմի բովանդակությունը՝ արտահայտելով իր վերաբերմունքը դրա նկատմամբ:</p>
Կապը ՀԴԶ վերջնարդյունքների հետ
Հ4, Հ5, Հ8, Հ10, Հ12, Հ14, Հ16, Հ17, Հ19, Հ24, Հ26, Հ30, Հ32, Հ42

**ԱՐՎԵՍՏԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԱՆՈՒՄ
ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔ**

Նպատակը	Վերջնարդյունքներ
<p>Ստեղծագործական աշխատանքները մեկնաբանելու, արտահայտիչ խոսք ձևավորելու կարողությունների ձևավորում:</p> <p>Ձևավորել ստեղծագործության թողած ազդեցությանը և իրականության հետ կապը բացահայտելու, վերաբերմունք արտահայտելու կարողություններ:</p>	<p>7.Ա.Ս.ՆՄ.2. Պատրաստել պաստառներ արվեստի տարրերի և սկզբունքների վերաբերյալ:</p> <p>7.Ա. Ա.ՔԱ.1. Կատարել արվեստագիտական հետազոտություն (կերպարվեստ, երաժշտություն, պար, թատրոն, դեկորատիվ-կիրառա-</p>

Ուղղորդող հարցադրում	կան արվեստ):
<p>Ինչո՞ւ են ստեղծագործությունները բաժանվում ժանրերի:</p> <p>Ինչո՞ւ է կարևոր իմանալ ստեղծագործության ոճը:</p> <p>Ստեղծագործության մեջ ի՞նչն է ավելի շատ տպավորում, ազդում մարդկանց վրա:</p> <p>Ինչպե՞ս գնահատել ստեղծագործությունները:</p>	<p>7.Ա. Ա.ՔԱ.2. Մեկնաբանել և վերլուծել արվեստի ստեղծագործությունները:</p> <p>7.Ա. Ա.Գ.1. Ձևակերպել ստեղծագործությունները գնահատելու չափանիշներ:</p> <p>7.Ա. Ա.Գ.2. Ցույց տալ աշխատանքներում օգտագործված լուծումները:</p> <p>7.Ա. Կ.ԱԴ.1. Ներկայացնել ժամանակակից արվեստի դրական կամ բացասական ազդեցությունն առօրյա կյանքում:</p>

Դասընթացի ուսումնասիրության արդյունքում սովորողը կկարողանա՝

1. Կատարել արվեստագիտական եզրույթների խմբավորում, ըստ առաջըրված չափանիշների:
2. Կատարել ստեղծագործական գործունեության հետ առնչվող եզրույթների մասնագիտական վերլուծություններ, թարգմանություններ:
3. Ստեղծել եզրույթերը ներկայացնող պաստառներ, պահպանել տառերի և բառերի ներկայացման համաչափությունները, պահպանել դեկորատիվ արտահայտչականությունը:
4. Վերլուծել արվեստի ստեղծագործությունները, կիրառել քննական վերաբերմունք տեսածի և զգացածի վերաբերյալ:
5. Ինքնուրույն, զույգով կամ խմբով մանրամասն ներկայացնել աշխատանքները:
6. Բանավոր կամ գրավոր ներկայացնել աշխատանքների հիմնական առանձնահատկությունները, դրանց կապը իրականության հետ (փոխանցում են, ազդում, նկարագրում, ահազանգում են, կամ կարող են ներազդել, ուղղորդել և այլն):
7. Դասակարգել աշխատանքները, հաշվի առնելով ընդհանուր կարծիքը և գնահատականները:
8. Աշխատանքները գնահատել՝ ըստ արտահայտչականության, գրագիտության, հիմնական գաղափարի փոխանցման:
9. Համեմատել ընկերների աշխատանքները:
10. Ներկայացնել մշակութային իրադարձություն, որը ներգործություն է ունեցել (դրական կամ բացասական) իր շրջապատի վրա:
11. Ներկայացնել հիմնական գաղափարների արդիականությունը:
12. Առանձնացնել և ցուցադրել ստեղծագործական հնարների կիրառման արդյունավետությունը և ազդեցությունը գաղափարի փոխանցման տեսանկյունից:
13. Առաջարկել և նախաձեռնել աշխատանքների ցուցադրության հետաքրիր տարբերակներ:
14. Ձևակերպել հարցերը և պատասխանները, թե որտե՞ր, ե՞րբ, ինչո՞ւ և ինչպե՞ս պետք է ընտրվեն աշխատանքները ցուցադրության համար:
15. Ներկայացնել ստեղծագործություններում առկա իմաստային, տեխնիկական, ոճային նրբությունները:
16. Ճանաչել և մատնանշել արվեստագետի ձեռագիրը:
17. Ձևակերպել արվեստի ստեղծագործության գնահատման տրամաբանված և համոզիչ հիմնավորումներ:
18. Բացահայտել քաղաքական, սոցիալական, մշակութային ազդակները արվեստագետի ստեղծագործական գործունեության վրա:
19. Ներկայացնել ստեղծագործական աշխատանքների վրա արտաքին (օտար) և ներքին (տեղական) գործոնների ազդեցությունը:
20. Մեկնաբանել ստեղծագործություններում կիրառված արվեստի հիմնական տարրերն ու սկզբունքները:

21. Ներկայացնել հիմնական գաղափարի մեկնաբանությունները արվեստի ստեղծագործություններում:
 22. Վեր հանել արվեստագետի ներկայացրած ուղերձները:
 23. Զննարկել և ներկայացնել ստեղծագործությունից ստացած զգացողությունները:

Բովանդակություն	Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող հասկացություններ
<p>Արվեստագիտական հետազոտություն: Թատերական կամ օպերային ներկայացում, ֆիլմ և այլն: Կատարման վարպետություն: Թեմայի արդիականություն: Ավանդական և ոչ ավանդական մոտեցումներ: Ստեղծագործությունների համեմատական վերլուծություն: Կատարման հաջողված և ձախողված հատվածներ:</p>	<p>Ժանրերի ֆունկցիոնալ տարբերությունների մեկնաբանություն: Ոճային բազմազանության և դրանց առանձնահատկությունների ներկայացում: Տարբեր ստեղծագործությունների վերաբերյալ կարծիքների արտահայտում հարց ու պատասխանի, ռուբրիկների միջոցով: Միևնույն ստեղծագործողի տարբեր աշխատանքներ: Պլանավորել և իրականացնել հետազոտություններ: Զննարկել արվեստագետի կողմից կյուբի և կատարման ձևի ընտրությունը՝ որպես ազդեցության, հուզականության արտահայտություն: Նույն թեմայով տարբեր ստեղծագործողների կատարած աշխատանքների կամ միևնույն ժանրի ստեղծագործությունների համեմատություն: Արվեստի ստեղծագործությունների քննարկում, վերլուծություն, դասակարգում և գնահատում: Կատարել ստեղծագործությունների փուլային վերլուծություն: Համեմատել տարբեր ժողովուրդների էպոսի և դիցաբանության արտացոլումն արվեստում: Մեկնաբանել և վերլուծել իր և ընկերների աշխատանքները: Առաջարկել և ձևակերպել ստեղծագործությունները գնահատելու չափանիշներ:</p> <p>Նկարագրել - Ի՞նչ է պատկերված: Ներկայացնել - Արվեստի ո՞ր տեսակին է պատկանում աշխատանքը: Վերլուծել - Ի՞նչ պատկերներ են կիրառված: Ի՞նչ նպատակով են օգտագործված հենց այդ պատկերները: Մեկնաբանել - Ինչի՞ մասին է պատմում ստեղծագործությունը:</p>	<p>Օրինաչափություն Կատարել դասակարգումներ, բացահայտել պատկերվող առարկաների նմանություններն ու տարբերությունները: Գտնել ներդաշնակություն:</p> <p>Համակարգ և մոդել Համակարգը՝ որպես ընդհանուր գաղափարով, թեմայով, մոտեցումով կատարված ստեղծագործությունը (ները) ներկայացնելու ընդհանրական մոտեցում, որով յուրաքանչյուր աշխատանք կամ աշխատանքի մաս հանդես է գալիս որպես մոդել:</p> <p>Ժամանակ և տարածություն Տարբեր մարդկանց կենցաղ, նրանց պատմություններ, ճանապարհորդություններ, մարդկության պատմության շրջադարձային կետեր, հայտնագործություններ, գյուտեր, ինչպես նաև անհատների և քաղաքակրթության միջև</p>

	<p>Քննարկել – Հաջողվել է արվեստագետին փոխանցել գաղափարը, թե ոչ: Այս աշխատանքներից ո՞րը կարելի է ձեռք բերել: Ինչո՞ւ այո և ինչո՞ւ՝ ոչ:</p>	<p>հարաբերությունները, դրանց փոխկապակցվածությունը տվյալ անձի, ազգի և մարդկության տեսանկյունից:</p>
--	---	--

<p>Առաջարկվող թեմաներ</p>
<p>Հայ աշուղական արվեստ: Վարդգես Սուրենյանց, «Խրիմյան հայրիկ», «Սալումե»: Սարգիս Սուրադյան, «Կոմիտաս»: Վասիլի Սուրիկով, «Բոյարուհի Մորոզովա»: Երվանդ Քոչար, Սասունցի Դավիթ գրաֆիկական շարք, Հակոբ Կոչոյան, «Սասունցի Դավիթ»:</p>

<p>Միջառարկայական կապ</p>
<p>Հայոց լեզու և գրականություն - ստեղծել տարաբնույթ ուսումնական/ ցուցադրական կյուբեր՝ պաստառ, գրքույկ, ուղեցույց, սահիկաշար, անիմացիա, տեսանյութ և այլն: Կարծիք հայտնել, պաշտպանել սեփական տեսակետն ու դիրքորոշումը, հիմնավորել այն: Մեկնաբանել գաղափարը՝ հիմնվելով գրական օրինակների վրա:</p> <p>Երկրաչափություն - սահմանել հավասար, համագիծ, տարագիծ, համուղղված, հակուղղված, հակադիր վեկտորներ հասկացությունները և կառուցել դրանց օրինակներ նաև դինամիկ մաթեմատիկայի ծրագրերով: Կառուցել, նաև դինամիկ մաթեմատիկայի ծրագրերով, տրված պատկերի համաչափ պատկեր:</p> <p>Ֆիզիկա - օրինակներով հիմնավորել, որ ձայնային ալիքները տարածվում են տարբեր միջավայրերով: Ռեզոնանս, արձագանք:</p> <p>Կենսաբանություն - մոդելների, նկարների, սխեմաների, տեսանյութերի միջոցով մեկնաբանել վերլուծիչների աշխատանքի սկզբունքները՝ հղում կատարելով տեսողական, լսողական զգայարանների հիմնական կառուցվածքային և գործառական առանձնահատկություններին:</p> <p>Աշխարհագրություն - ձևավորել հավասարակշռված կարծիք աշխարհագրական գործոններով պայմանավորված էթնոմշակութային և այլ առանձնահատկությունների վերաբերյալ:</p> <p>Ֆիզկուլտուրա - դրսևորել ինքնավաստահության, նպատակասլացության, ինքնազնահատման և դժվարությունները հաղթահարելու հմտություններ: Պասիվ շարժունակության հետևանքները և օրգանիզմի վրա բացասական ազդեցությունները</p> <p>Պատմություն, Հասարակագիտություն- ըմբռնել իր և սերունդների կապը պատմության մեջ, բացահայտել պատմական փորձի յուրացման ու հաջորդ սերունդներին փոխանցման անհրաժեշտությունը: Դրսևորել խնդիրներ և հարցեր ձևակերպելու, անհատական և խմբային նախագծեր իրականացնելու հմտություններ:</p> <p>Առողջ ապրելակերպ - տարբերել անձի, հասարակության շահերը պաշտպանող, չվնասող, ընդհանուրի բարօրությունից բխող ենթամշակույթը, մասնավոր շահեր սպասարկող ենթամշակույթներից:</p> <p>ԹԳՅԳ - հաղորդակցման մի շարք ձևերի կիրառություններ (Նորությունների թերթիկներ, վեբկայքեր, բազմամեդիա պրեզենտացիաներ,</p>

<p>երաժշտության գնահատման հարթակներ, մուլտֆիլմեր, թռուցիկներ և պաստառներ): Անհատապես կամ համագործակցությամբ ստեղծել արտիֆակտ, որը պատասխանում է հետազոտական հարցին և ներկայացնում է արդյունքներն ու եզրահանգումները:</p> <p>Օտար լեզուներ -կապակցված խոսքով ներկայացնել պատմության/իրադարձության/ֆիլմի բովանդակությունը՝ արտահայտելով իր վերաբերմունքը դրա նկատմամբ:</p>
<p>Կապը ՀՊՉ վերջնարդյունքների հետ</p>
<p>Հ4, Հ5, Հ8, Հ10, Հ12, Հ14, Հ24, Հ30, Հ42, Հ44</p>

ԱՐՎԵՍՏԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄ	
ԱՐՎԵՍ, ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ԳՅՈՒՏԵՐ	
Նպատակը	Վերջնարդյունքներ
	<p>դրություններ՝ կիրառելով տվյալ շրջանին բնորոշ հասանելի միջոցները: Կատարել որևէ հայտնի ստեղծագործության բեմականացման գեղարվեստական, նորարարական, ոճավորված նոր մեկնաբանություն:</p> <p>Վերացական, զգացմունքային, երևակայական բնույթի մի քանի ստեղծագործությունների համադրումների փորձեր: Կոմպոզիցիոն երաժշտական, թատերային, պարային, ռիթմիկ աշխատանքներ, երևակայական, գունային մոտիվներով:</p> <p>Ստեղծագործությունների նոր մատուցումներ տարբեր նյութերի վրա՝ թուղթ, կտոր, կավ, լուսանկար, ֆրոնտաժ, կոլաժ, երաժշտական մեկնաբանություններ և այլն:</p> <p>Ինքնուրույն վերաբերմունքի արտահայտում:</p> <p>Կատարել ստեղծագործական աշխատանքներ՝ համադրելով հայտնի ստեղծագործություններն ու ազգային ավանդական մոտիվները՝ 2D, 3D, 4D:</p> <p>Համաչափության, պատկերի ընդհանուր դասավորության, կոմպոզիցիոն համաչափության, ուսումնասիրության և համեմատության վրա հիմնված վարժություններ և ստեղծագործական աշխատանքներ:</p> <p>Ընդհանրացման և նմանության կարողությունների ձևավորում:</p> <p>Թեմատիկ նկարչություն դիտման, պատկերացման, հիշողության և գրական ստեղծագործությունների պատկերազարդման և ձևավորման միջոցով:</p> <p>Կրկնօրինակել արվեստի որևէ գործ:</p> <p>Ըստ նախընտած նյութի՝ կառուցել ճարտարապետական կոթողի մանրակերտ:</p> <p>Ներկայացնել արվեստի տարբեր ճյուղերում նյութերի կիրառման հնարավորություններն ու սկզբունքները:</p> <p>Պատմամշակութային կառույցների, նորաձևության ոճերի նոր դեկորատիվ նախագծերի մշակումների կատարում 2D, 3D, 4D :</p>	<p>ժեքներ, զգացումներ, մշակույթի դրսևորումներ արտահայտող ուղիները, որոնցով արժևորվում և գնահատվում է ստեղծարարությունը:</p>
--	---	---

Առաջարկվող թեմատիկա	
<p><i>Անցողիկը և հավերժականը երաժշտության մեջ:</i> <i>Հանրահայտ ստեղծագործությունների նոր մեկնաբանություններ:</i> <i>Արվեստը տարածության մեջ` ճարտարապետություն, քանդակը հանրային վայրերում:</i> <i>Անսովոր հեռանկարներ, Հավաքածու, գաղափարներ, որոնք փոխում են աշխարհը, ոսկե հատում:</i> <i>Գծանկար, գուլանկար, ԴԿԱ, լուսանկարչություն:</i></p>	
Միջառարկայական կապ	
<p>Բնական գիտություններ - վերլուծել բնական համակարգերի փոխկապակցվածությունը՝ դիտարկելով բնագիտական գիտելիքը որպես մեկ ամբողջություն:</p> <p>Հանրահաշիվ, երկրաչափություն - համադրել և վերլուծել տարբեր մաթեմատիկական մոդելներ ծանոթ և անծանոթ իրավիճակներում, կիրառել տարածական մարմինների մասին գիտելիքները կյանքում և տարբեր ուսումնական առարկաներ ուսումնասիրելիս:</p> <p>Հումանիտար գիտություններ- վերլուծել իր ազգի ձևավորման և զարգացման պատմական ուղին, քաղաքացու դիրքից արժևորել Հայաստանի Հանրապետությունը որպես իր ներկան և ապագան կերտելու միջավայր: Համեմատել և վերլուծել հասարակական , քաղաքական երևույթների և գործընթացների տարբեր մեկնաբանություններ, արտահայտե հիմնավորված դիրքորոշում դրանց վերաբերյալ:</p> <p>Առողջ ապրելակերպ - բացատրել տեխնոլոգիական նորամուծությունների գիտական հիմքերը, ներկայացնել տեխնոլոգիական ձեռքբերումները որպես գիտական և հետազոտական մտքի արգասիք, գիտակցել դրանց հետ կապված հնարավոր վտանգները բնության և մարդու համար:</p> <p>Ինֆորմատիկա - կիրառել համալիր գիտելիքներ և անհրաժեշտ հմտություններ՝ տեխնոլոգիական զարգացման և տեղեկատվության բազմազանության պայմաններում կողմնորոշվելու համար:</p>	
Կապը ՀԴԶ վերջնարդյունքների հետ	
Մ4, Մ5, Մ7, Մ9, Մ10, Մ12, Մ15, Մ16, Մ25, Մ26, Մ33, Մ40, Մ41, Մ42	

ԳԵՂԱՐԿԵՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	
ՎԵՐԱՆԱՅՈՒՄ ԵՎ ՑՈՒՑԱԴՐՈՒՄ	
Նպատակը	Վերջնարդյունքներ

<p>Ձևավորել արվեստի ստեղծագործությունների փուլային վերլուծությունների հմտություններ:</p> <p>Թեմատիկ ցուցադրությունների և ներկայացումների արդյունավետ կազմակերպում:</p>	<p>10.Ա. Ս.ՆՄ.2. Ձևակերպումներում կիրառել մասնագիտական բառամթերք և եզրույթներ:</p> <p>10.Ա. Ս.ՆՄ.3. Բացատրել ավանդական և ոչ ավանդական աշխատանքային գործիքների և միջոցների ազդեցությունը մարդկանց առողջության և շրջակա միջավայրի վրա: Ցուցադրել նյութերի, գործիքների և միջոցների անվտանգ կիրառման հմտություններ:</p> <p>10.Ա. Ա.ՎՑ. 1. Մենակ կամ խմբով ներկայացնել ամբողջական, ավարտուն թեմատիկ նախագծեր լայն լսարանի համար:</p> <p>10.Ա. Ա.ՎՑ. 2. Խմբով կամ մենակ ներկայացնել հասարակական նշանակություն կամ ազդեցություն ունեցող արվեստագիտական նախագծեր:</p> <p>10.Ա. Ա.ՎՑ.3. Մենակ կամ խմբով վերլուծել և ներկայացնել հասարակական, սոցիալական, մշակութային կամ քաղաքական համոզմունքներ ներկայացնող թեմատիկ նախագծեր:</p> <p>10.Ա. Ա.ՎՄ. 1. Վերլուծել և ձևավորել ստեղծագործական նախագծերի թեմատիկ, տեխնիկական և գեղարվեստական սկզբունքներ:</p> <p>10.Ա. Ա.ՔԱ.1. Տարբեր ստեղծագործությունների վերաբերյալ ձևավորել մասնագիտական քննադատական կարծիքներ:</p> <p>10.Ա. Ա.ՔԱ.2. Քննարկել և վերլուծել տարբեր ժամանակներում ստեղծված նախագծերը, դրանց թողած հասարակական ազդեցությունը:</p> <p>10.Ա. Կ.ԱԴ.3. Ստեղծագործաբար մոտենալ առօրեական ինդիքների լուծմանը:</p>
<p>Ուղղորդող հարցադրում</p>	
<p>Ի՞նչ չափանիշներով են ընտրվում ստեղծագործությունները:</p> <p>Չարկավոր է արդյոք ցուցադրել աշխատանքները:</p> <p>Ի՞նչ է նշանակում արվեստի ստեղծագործության ցուցադրություն:</p>	

Դասընթացի ուսումնասիրության արդյունքում սովորողը կկարողանա՝

1. Կատարել արվեստագիտական եզրույթների խմբավորում՝ ըստ առաջադրված չափանիշների
2. Կատարել ստեղծագործական գործունեությանն առնչվող եզրույթների մասնագիտական վերլուծություններ, թարգմանություններ:
3. Ստեղծել եզրույթները ներկայացնող պաստառներ՝ պահպանել տառերի և բառերի ներկայացման համաչափությունները, պահպանել դեկորատիվ արտահայտչականությունը:
4. Պահպանել աշխատանքի անվտանգության կանոնները,
5. Ճիշտ կազմակերպել աշխատանքային տարածքը, աշխատանքի բոլոր փուլերում պահպանել հիգիենայի, անձնական տարածքի կանոնները:
6. Աշխատանքներում պահպանել ընտրված նյութերով գրագետ աշխատելու օրինաչափությունները:
7. Համագործակցել ընդհանուր աշխատանքային տարածքում:
8. Առաջարկել խմբային և անհատական ցուցադրությունների հետաքրքիր տարբերակներ:
9. Ուսումնասիրել և ներկայացնել ցուցադրությունների և ներկայացումների տարբերակներ, հիմնավորելով ընտրությունը:
10. Մեկնաբանել և տեսակավորել ստեղծագործական աշխատանքները:
11. Ներկայացնել հիմնական գաղափարների արդիականությունը:
12. Ներկայացնել հիմնական գաղափարի մեկնաբանությունը արվեստի ստեղծագործություններում:
13. Վեր հանել արվեստագետի հղած ուղերձները:
14. Առանձնացնել և ցուցադրել ստեղծագործական հնարների կիրառման արդյունավետությունը և ազդեցությունը գաղափարի հաղորդման տեսանկյունից:
15. Ներկայացնել ստեղծագործություններում առկա իմաստային, տեխնիկական, ոճային նրբությունները:
16. Ճանաչել և մատնանշել արվեստագետի ձեռագիրը:
17. Ձևակերպել արվեստի ստեղծագործության գնահատման տրամաբանված և համոզիչ հիմնավորումներ:
18. Բացահայտել քաղաքական, սոցիալական, մշակութային ազդակները արվեստագետի ստեղծագործական գործունեությանը,
19. Ներկայացնել ստեղծագործական աշխատանքների վրա արտաքին (օտար) և ներքին (տեղական) գործոնների ազդեցությունը:
20. Զննարկել և ներկայացնել ստեղծագործությունից ստացած զգացողությունները:

Բովանդակություն	Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող հասկացություններ
Նախագծերի գեղարվեստական և նորարարական չափանիշներ: Նախագծեր լայն լսարանի համար: Հասարակական նշանակություն ունեցող խմբային կամ անհատական նախագծեր: Հանդիսատեսի համոզմունքների, գաղա-	Ստեղծել աշխատանքային տետր կամ պորտֆոլիո: Մեկնակ կամ խմբով առանձնացնել աշխատանքները՝ ըստ առաջարկված չափանիշների: Ձևակերպել հարցերը և պատասխանները, թե որտեղ, երբ, ինչու և ինչպես պետք պատրաստվեն աշխատանքները ցուցադրության կամ ներկայացման համար:	Համակարգ և մոդել Համակարգը որպես ընդհանուր գաղափարով, թեմայով, մոտեցումով կատարված ստեղծագործությունը (ները) ներկայացնելու ընդհանրական մոտեցում, որով

<p>փարների, տեսակետների վրա ազդեցություն թողնող նախագծեր կամ ցուցադրություններ:</p>	<p>Մեկնաբանել ստեղծագործություններից ստացած տպավորությունները: Բացատրել, թե ինչու են ընտրվել տվյալ աշխատանքները: Նշել և մեկնաբանել ցուցադրության կամ ներկայացման կազմակերպման նպատակները, հիմնական սկզբունքները: Մեկնաբանել սեփական աշխատանքները: Պատրաստել ռուբրիկներ և հարցաշարեր արդյունավետ հետազոտական աշխատանքներ կատարելու համար: Ստեղծել դասակարգիչներ, որոնց համաձայն՝ կընտրվեն և կառանձնացվեն աշխատանքները: Աշխատել խմբով: Սովորողների կողմից կատարված աշխատանքների կամ թեմատիկ առանձին ուղղվածություն ունեցող ստեղծագործությունների ցուցադրություն/ներկայացում: Դասընթացների այս ձևը կարող է կազմակերպվել որևէ առարկայի հետ ինտեգրված: Նախագծերի ցուցադրությունների կամ ներկայացումների կազմակերպման ժամանակ հաշվարկել հնարավոր ռեսուրսները (ժամանակ, նյութ, միջոց, տարածք և այլն): Ապահովել պատկերային հաղորդակցության արդյունավետ և դրական միջավայր: Քննարկել ցուցադրությունների կամ ներկայացումների ազդեցության հասցեականությունը:</p>	<p>յուրաքանչյուր աշխատանք կամ աշխատանքի մաս հանդես է գալիս որպես մոդել:</p> <p>Մասշտաբ, համամասնություն, քանակ համամասնության ու քանակի պատկերացումները սովորողին կօգնեն հասկանալու իր կատարած աշխատանքի ծավալը, հարկ եղած դեպքերում՝ համեմատություններ, վերլուծություններ կատարել Կառուցվածքը միևնույն խմբին կամ դասին պատկանող օբյեկտների բազմություն է՝ դրանց հատուկ գոյության ու գործառնության համընդհանուր սկզբունքներով:</p>
---	---	---

Առաջարկվող թեմատիկա

Արվեստի դերը մեր կյանքում:
Ներգրավվածությունը արվեստում, երբ արվեստը ծառայում է սոցիալական և քաղաքական պահանջներին:
Տոնակատարություններ: Տոնավաճառներ: Ծես:
Թեմատիկ ցուցադրություններ՝ «Արվեստ և բնապահպանություն», «Արվեստ և քաղաքականություն», «Արվեստ և իրականություն», «Արվեստ և նորաձևություն», «Արվեստ և քաղաքաշինություն», «Արվեստ և կրոն», «Արվեստ և գիտություն»:

<p>Միջառարկայական կապ</p> <p>Քննագիտական առարկաներ - վերլուծել բնական համակարգերի փոխկապակցվածությունը՝ դիտարկելով բնագիտական գիտելիքը որպես մեկ ամբողջություն:</p> <p>Հանրահաշիվ, երկրաչափություն - համադրել և վերլուծել տարբեր մաթեմատիկական մոդելներ ծանոթ և անծանոթ իրավիճակներում, կիրառել տարածական մարմինների մասին գիտելիքները կյանքում և տարբեր ուսումնական առարկաներ ուսումնասիրելիս:</p> <p>Հումանիտար առարկաներ - վերլուծել իր ազգի ձևավորման և զարգացման պատմական ուղին, քաղաքացու դիրքից արժևորել Հայաստանի Հանրապետությունը որպես իր ներկան և ապագան կերտելու միջավայր: Համեմատել և վերլուծել հասարակական քաղաքական երևույթների և գործընթացների տարբեր մեկնաբանություններ, արտահայտել հիմնավորված դիրքորոշում դրանց վերաբերյալ:</p> <p>Առողջ ապրելակերպ - բացատրել տեխնոլոգիական նորամուծությունների գիտական հիմքերը, ներկայացնել տեխնոլոգիական ձեռքբերումները որպես գիտական և հետազոտական մտքի արգասիք, գիտակցել դրանց հետ կապված հնարավոր վտանգները բնության և մարդու համար:</p> <p>ԹԳՅԳ - կիրառել համալիր գիտելիքներ և անհրաժեշտ հմտություններ՝ տեխնոլոգիական զարգացման և տեղեկատվության բազմազանության պայմաններում կողմնորոշվելու համար:</p>
<p>Կապը ՀԴԶ վերջնարդյունքների հետ</p> <p>Մ1, Մ5, Մ7, Մ9, Մ11, Մ15, Մ16, Մ17, Մ18, Մ20, Մ23, Մ24, Մ28, Մ29, Մ30, Մ39, Մ40, Մ41, Մ42</p>

ԱՐՎԵՍՏԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԱՆՈՒՄ

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔ (8)

Նպատակը	Վերջնարդյունքներ
<p>Ճիշտ հարցադրումներ ձևակերպելու հմտությունների ձևավորում:</p> <p>Կիրառված ստեղծագործական հնարների վերաբերյալ բացահայտումների և եզրակացությունների կատարման հմտությունների ձևավորում:</p> <p>Ստեղծագործության թողած ազդեցությունը և կապը իրականության հետ տեսնելում դրա նկատմամբ վերաբերմունքի</p>	<p>10.Ա. Ս.ՆՄ.2. Ձևակերպումներում կիրառել մասնագիտական բառամթերք և եզրույթներ:</p> <p>10.Ա. Ա.ՔԱ.1. Տարբեր ստեղծագործությունների վերաբերյալ ձևավորել մասնագիտական քննադատական կարծիքներ:</p> <p>10.Ա. Ա.ՔԱ.2. Քննարկել և վերլուծել տարբեր ժամանակներում ստեղծված նախագծերը, դրանց թողած հասարակական ազդեցությունը:</p>

<p>ձևավորում:</p>	<p>10.Ա. Ա.Գ.1. Վերլուծել տարբեր արվեստագիտական գնահատականներ արդիականության, մշակութային արժևորման տեսանկյունից:</p>
<p>Ուղղորդող հարցադրում</p>	<p>10.Ա. Ա.Գ.2. Գնահատել նախագծերը՝ հաշվի առնելով հասարակության տարբեր խավերի գեղագիտական նախընտրությունները:</p>
<p>Ինչպե՞ս է արվեստի ստեղծագործության վերլուծությունն օգնում հասկանալու և ճանաչելու աշխարհը:</p>	<p>10.Ա. Կ.ԱԴ.1. Ներկայացնել, թե որքանով է մշակույթի, պատմության, ավանդությունների և սովորույթների իմացությունն օգնում լիարժեք ընկալելու ստեղծագործությունը:</p>
<p>Ի՞նչ է նպաստում ստեղծագործական մտածողության զարգացմանը:</p>	<p>10.Ա. Կ.ԱԴ.3. Ստեղծագործաբար մոտենալ առօրեական խնդիրների լուծմանը:</p>
<p>Ի՞նչ չափանիշներով կարելի է գնահատել ստեղծագործությունները:</p>	
<p>Դասընթացի ուսումնասիրության արդյունքում սովորողը կկարողանա՝</p>	
<ol style="list-style-type: none"> 1. Կատարել արվեստագիտական եզրույթների խմբավորում, ըստ առաջըրված չափանիշների: 2. Կատարել ստեղծագործական գործունեության հետ առնչվող եզրույթների մասնագիտական վերլուծություններ, թարգմանություններ: 3. Ստեղծել եզրույթները ներկայացնող պաստառներ, պահպանել տառերի և բառերի ներկայացման համաչափությունները, պահպանել դեկորատիվ արտահայտչականությունը: 4. Կատարել կերպարվեստային գործունեության հետ առնչվող նյութերի մասնագիտական վերլուծություններ, թարգմանություններ: 5. Ընտրել և առանձնացնել աշխատանքները՝ հիմնական գաղափարի, խորհրդանիշների, թեմատիկայի, տարրերի և սկզբունքների հիման վրա: 6. Բացատրել դիտողի վրա ստեղծագործության ազդեցության հնարները: 7. Կիրառել ստեղծագործական և քննադատական մտածողության հմտություններ: 8. Նշել այն հիմքերը և սկզբունքները, որոնցով առաջնորդվել է ստեղծագործություններն առանձնացնելիս: 9. Ստեղծել աշխատանքներ, որոնք առնչվում են կյանքի տարբեր ոլորտների և արվեստի մյուս տեսակների հետ: 10. Մեկնաբանել կատարված ընտրությունը: 11. Ներկայացնել ինքնուրույն, զույգով կամ խմբով կատարված աշխատանքները: Թվարկել կիրառված տարրերն ու սկզբունքները, և դրանցով արտահայտչականություն ապահովելու հնարները: 12. Դասակարգել աշխատանքները, հաշվի առնելով ընդհանուր կարծիքը և գնահատականները: 13. Աշխատանքներում ցուցադրել մյուս ուսումնական առարկաներից ստացած գիտելիքները: 14. Զննել, վերլուծել և ներկայացնել ստեղծագործություններում առկա կապը արվեստի մյուս տեսակների հետ: 15. Բացահայտել և մեկնաբանել գեղարվեստական գաղափարը հաղորդելու գեղարվեստական հնարները: 16. Կատարել վերլուծություններ և հետազոտություններ, մշակութային իրադարձության նշանակալիության, կարևորության վերաբերյալ: 17. Հավաքագրել և դասակարգել մշակութային իրադարձության, կամ ստեղծագործության վերաբերյալ արտահայտված կարծիքները: 	

18. Վերլուծել արվեստի ստեղծագործությունները, կիրառել քննական վերաբերմունք տեսածի և զգացածի վերաբերյալ:
19. Բանավոր կամ գրավոր ներկայացնել աշխատանքների հիմնական առանձնահատկությունները, դրանց կապը իրականության հետ (փոխանցում են, ազդում, նկարագրում, ահազանգում են, կամ կարող են ներազդել, ուղղորդել և այլն):
20. Ընտրել շրջապատող իրականությունը արվեստի միջոցով ներկայացնելու տարբերակներ:
21. Հասկանալ, որ բոլոր մշակույթները ներկայանում են իրենց արվեստով:
22. Հասկանալ, որ արվեստը բոլոր ժամանակների և մշակույթների հաղորդակցման անփոփոխիմելի լեզու է:
23. Ներկայացնել մշակութային իրադարձություն, որը ներգործություն է ունեցել (դրական կամ բացասական) իր շրջապատի վրա:

Բովանդակություն	Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող հասկացություններ
<p>Մասնագիտական, քննադատական վերլուծություն:</p> <p>Նախագծերի համեմատություն և դասակարգում ըստ մատուցման ձևի, ժամանակաշրջանի, թեմայի արդիականության և այլն:</p> <p>Հանդիսատեսի գեղագիտական նախընտրություն, ազդեցության մշակութային նշանակություն: Ցուցադրությունների վերաբերյալ մասնագիտական և հասարակական արձագանքների վերլուծություն (մամուլ, արձագանքների քանակ, դիտումների ակտիվություն և այլն): Արվեստի ստեղծագործությունների գնահատում:</p>	<p>Ժանրերի ֆունկցիոնալ տարբերությունների մեկնաբանություն:</p> <p>Ոճային բազմազանության և դրանց առանձնահատկությունների ներկայացում:</p> <p>Տարբեր ստեղծագործությունների վերաբերյալ կարծիքների արտահայտում հարց ու պատասխանի, ռուբրիկների միջոցով:</p> <p>Միևնույն ստեղծագործողի տարբեր աշխատանքներ:</p> <p>Պլանավորել և իրականացնել հետազոտություններ: Զննարկել արվեստագետի կողմից գույնի և կատարման տեխնիկայի ընտրությունը՝ որպես ազդեցության, հուզականության արտահայտություն:</p> <p>Նույն թեմայով տարբեր ստեղծագործողների կատարած աշխատանքներ:</p> <p>Միևնույն ժանրի ստեղծագործությունների համեմատություն:</p> <p>Արվեստի ստեղծագործությունների քննարկում, վերլուծություն, դասակարգում և գնահատում:</p> <p>Մեկնաբանել և վերլուծել իր և ընկերների աշխատանքները:</p> <p>Առաջադրել ստեղծագործական աշխատանքի քննության ճիշտ հարցադրումներ:</p> <p>Ուսումնասիրել և ներկայացնել մշակութային նշանա-</p>	<p>Չարգացում</p> <p>Չարգացումը այնպիսի փոփոխություն է, որի հետևանքով առաջանում է որակական նոր առաջադիմական վիճակ:</p> <p>Կայունություն և փոփոխություն</p> <p>Կայունությունը միշտ մրցակցող գործոնների հաշվեկշիռն է: Դրա խախտումը համակարգը դուրս է բերում կայուն վիճակից, երբ բացակայում է հետադարձ կապը: Սակայն արվեստագիտական տեսանկյունից կարելի է ընկալել որպես մեկից ավելի համակարգերի առկայություն, միևնույն ստեղծագործության մեջ:</p> <p>Այստեղ մեկ գործոնի փոփոխությունը չի խախտում համակարգը, քանի որ մյուս գործոնն իր վրա է վերցնում ընդհանուր հավասարակշռությունը:</p>

	<p>կալի իրադարձություններ: Ուսումնասիրել տարբեր ժամանակաշրջաններում տեղի ունեցած պատմական իրադարձությունների արտացոլումն արվեստում: Քննարկել, թե ինչպես է արվեստի վերլուծությունն օժանդակում ստեղծագործական մտածողության զարգացմանը: Փորձել «կարդալ» ստեղծագործությունը: Վերլուծել ստեղծագործության վերաբերյալ տարբեր մեկնաբանություններ, դասակարգել կամ առանձնացնել դրանք՝ ըստ քննական վերլուծության: Առաջարկել և ձևակերպել ստեղծագործությունները գնահատելու չափանիշներ: Կատարել չորս փուլային վերլուծություն՝ նկարագրել, վերլուծել, մեկնաբանել, գնահատել:</p>	
--	---	--

Առաջարկվող թեմատիկա

Ավանգարդ: Ռետրո: Ոսկե դար: Բոհեմական ոճ: Ռաբիս: Հիպպիական շարժում: Կոնցեպտուալ արվեստ:
«Արվեստի մասին գիտելիքը՝ ինչի՞ համար է այն»:
«Արվեստը և միջավայրը՝ ուսումնասիրությունից մինչև մերժում»:
«Երբ արվեստը ներկայացնում է հասարակությունը՝ ո՞ր հասարակությունը: Ու՞մ դիմանկարը»:

Միջառարկայական կապ

Բնագիտական առարկաներ - վերլուծել բնական համակարգերի փոխկապվածությունը՝ դիտարկելով բնագիտական գիտելիքը որպես մեկ ամբողջություն:

Հանրահաշիվ, երկրաչափություն - համադրել և վերլուծել տարբեր մաթեմատիկական մոդելներ ծանոթ և անծանոթ իրավիճակներում, կիրառել տարածական մարմինների մասին գիտելիքները կյանքում և տարբեր ուսումնական առարկաներ ուսումնասիրելիս:

Հումանիտար առարկաներ - վերլուծել իր ազգի ձևավորման և զարգացման պատմական ուղին, քաղաքացու դիրքից արժևորի Հայաստանի Հանրապետությունը որպես իր ներկան և ապագան կերտելու միջավայր: Համեմատել և վերլուծել հասարակական և քաղաքական երևույթների և գործընթացների տարբեր մեկնաբանություններ, արտահայտել հիմնավորված դիրքորոշում դրանց վերաբերյալ:

Առողջ ապրելակերպ - բացատրել տեխնոլոգիական նորամուծությունների գիտական հիմքերը, ներկայացնել տեխնոլոգիական ձեռքբերումները որպես գիտական և հետազոտական մտքի արգասիք, գիտակցել դրանց հետ կապված հնարավոր վտանգները բնության և մարդու համար:

ԹԳՅԳ - կիրառել համալիր գիտելիքներ և անհրաժեշտ հմտություններ՝ տեխնոլոգիական զարգացման և տեղեկատվության բազմազանության պայմաններում կողմնորոշվելու համար:

Կապը ՅՊԶ վերջնարդյունքների հետ

Մ1, Մ5, Մ7, Մ9, Մ11, Մ15, Մ16, Մ18, Մ23, Մ24, Մ27, Մ28, Մ29, Մ30, Մ39, Մ40, Մ41, Մ42

ԱՐՎԵՍՏԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄ

ԱՐՎԵՍՏ, ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ԳՅՈՒՏԵՐ

Նպատակը	Վերջնարդյունքներ
<p>Արվեստի ստեղծագործությունների տեխնիկական, նյութաբանական վերլուծություններ կատարելու հմտությունների ձևավորում:</p> <p>Ստեղծագործությունների միջոցով տարբեր ժամանակների մշակութային առանձնահատկությունները ուսումնասիրելու կարողությունների ձևավորում:</p>	<p>10.Ա. Ս.ՆՄ.1. Հետազոտել տարբեր նյութեր, միջոցներ, գտնել ստեղծագործական աշխատանքներ ստանալու նոր մոտեցումներ (2D, 3D 4D), որոնք կարող են ունենալ հասարակական ներգործություն:</p> <p>10.Ա. Ս.ՆՄ.2. Ձևակերպումներում կիրառել մասնագիտական բառամթերք և եզրույթներ:</p> <p>10.Ա. Ա.ՔԱ.1. Տարբեր ստեղծագործությունների վերաբերյալ ձևավորել մասնագիտական քննադատական կարծիքներ:</p> <p>10.Ա. Ա.ՔԱ.2. Զննարկել և վերլուծել տարբեր ժամանակներում ստեղծված նախագծերը, դրանց թողած հասարակական ազդեցությունը:</p> <p>10.Ա. Ա.Գ.1. Վերլուծել տարբեր արվեստագիտական գնահատականներ՝ արդիականության, մշակութային արժևորման տեսանկյունից:</p> <p>10.Ա. Ա.Գ.2. Գնահատել նախագծերը՝ հաշվի առնելով հասարակության տարբեր խավերի գեղագիտական նախընտրությունները:</p> <p>10.Ա. Ս.ԱՏ.1. Ներկայացնել որևէ արվեստագետի կամ ստեղծագործություն՝ մատուցման ձևը համապատասխանեցնելով վերջինիս ոճին, ժամանակաշրջանին և այլն:</p> <p>10.Ա. Ս.ԱՏ.2. Ներկայացնել տեխնոլոգիական նոր մոտեցումների ազդեցությունը ժամանակակից արվեստի վրա:</p>
<p>Ուղղորդող հարցադրում</p>	
<p>Ինչպե՞ս է արվեստն օգնում հասկանալու մարդկանց և նրանց շրջապատը:</p> <p>Ինչպե՞ս է արվեստը ներկայացնում իրականությունը: Կա՞րողո՞ք արվեստ մեր շրջապատում:</p> <p>Որքանո՞վ է արվեստի ուսումնասիրությունն օգնում պլանավորելու մեր ապագան:</p>	

Դասընթացի ուսումնասիրության արդյունքում սովորողը կկարողանա՝

1. Չարգացնել գաղափարը՝ աշխատել թեմայի մշակման, Եսքիզների կատարման ուղղությամբ,
2. Տարբեր գործիքներով և միջոցներով հասնել առավել արտահայտչականության:
3. Ընտրել թեմային համապատասխան առավել արդյունավետ գործիքներ:
4. Պատկերացնել, հետազոտել, համադրել, հակադրել, արտահայտել նախագծի հիմնական գաղափարները:
5. Կազմել նախագծի գործողությունների պլան, որոշել նյութը, մատուցման ձևը/ձևերը:
6. Հավաքել օգտակար տեղեկատվություն, ձևակերպել խնդիրը, ստեղծել նախնական տարբերակ, ընտրել այլընտրանքային տարբերակ:
7. Կատարել արվեստագիտական եզրույթների խմբավորում, ըստ առաջդրված չափանիշների:
8. Կատարել ստեղծագործական գործունեության հետ առնչվող եզրույթների մասնագիտական վերլուծություններ, թարգմանություններ:
9. Ստեղծել եզրույթները ներկայացնող պաստառներ, պահպանել տառերի և բառերի ներկայացման համաչափությունը, դեկորատիվ արտահայտչականությունը:
10. Կատարել կերպարվեստային գործունեության հետ առնչվող նյութերի մասնագիտական վերլուծություններ, թարգմանություններ:
11. Դասակարգել աշխատանքները, հաշվի առնելով ընդհանուր կարծիքը և գնահատականները:
12. Աշխատանքներում ցուցադրել մյուս ուսումնական առարկաներից ստացած գիտելիքները:
13. Քննել, վերլուծել և ներկայացնել ստեղծագործություններում առկա կապը արվեստի մյուս տեսակների հետ:
14. Բացահայտել և մեկնաբանել գեղարվեստական գաղափարը փոխանցելու գեղարվեստական հնարները:
15. Բանավոր կամ գրավոր ներկայացնել աշխատանքների հիմնական առանձնահատկությունները, դրանց կապն իրականության հետ (փոխանցում են, ազդում, նկարագրում, ահազանգում են, կամ կարող են ներազդել, ուղղորդել և այլն):
16. Ուսումնասիրել և ներկայացնել ավանդական, դասական և ժամանակակից արվեստի վրա առևտրային և մեդիա հարաբերությունների ազդեցությունը:
17. Հասկանալ, որ բոլոր մշակույթները ներկայանում են իրենց արվեստով:
18. Հասկանալ, որ արվեստը բոլոր ժամանակների և մշակույթների հաղորդակցման անփոխարինելի լեզու է:
19. Ներկայացնել մշակութային իրադարձություն, որը ներգործություն է ունեցել (դրական կամ բացասական) իր շրջապատի վրա:
20. Խմբավորել տարբեր ժամանակներում և մշակույթներում ստեղծված աշխատանքները, մեկնաբանել դրանց ազդեցությունը:
21. Քննարկել և ներկայացնել ստեղծագործություններում առկա ժամանակաշրջանը, տեղանքը, կլիման, օգտագործված նյութերը, գաղափարը և տեխնոլոգիական միջոցները, որոնք իմաստ և հուզականություն են փոխանցում աշխատանքին:
22. Բացատրել, թե ինչ նյութեր են օգտագործել նկարիչները տարբեր ժամանակաշրջաններում, և ինչո՞վ են դրանք պայմանավորված:

Բովանդակություն	Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող հասկացություններ
------------------------	---------------------------------------	--------------------------------

<p>Արվեստագետի կամ ստեղծագործության նոր մատուցում: Տարբեր ժամանակների տեխնոլոգիական և գիտական նորարարությունների ազդեցությունն արվեստի վրա: Արվեստի ստեղծագործությունների քիմիական, ֆիզիկական, կենսաբանական, հոգեբանական, նյութաբանական քննություն և վերլուծություն:</p>	<p>Ուսումնասիրել արվեստի աշխատանքներում օգտագործված նյութերը: Յետագոտել տարբեր ժամանակներում արվեստագետների աշխատանքի միջոցները և հնարավորությունները: Համեմատել տարբեր ստեղծագործություններ: Գտնել նմանություններ և տարբերություններ օգտագործված նյութերի կամ աշխատանքի միջոցների մեջ: Քննարկել տարբեր երկրներում քաղաքական, հասարակական, մշակութային իրադարձությունների խորհրդանիշները՝ որպես մշակութային ժառանգություն: Հայ և համաշխարհային արվեստի ներկայացուցիչների մասին պատմող տեսաֆիլմերի, գեղարվեստական գրականության, մեդիայի ուսումնասիրություններ: Յետագոտել արվեստի ստեղծագործություններում կիրառված արվեստի տարրերը և սկզբունքները, դիտարկել տվյալ ժամանակաշրջանին բնորոշ և հասանելի միջոցները: Ուսումնասիրել ստեղծագործությունները՝ կատարելով ֆիզիկական, քիմիական, կենսաբանական հետազոտություններ: Քննարկել ստեղծագործությունների վերականգնման և պահպանման հնարավորությունները: Ուսումնասիրել տարբեր արվեստագետների աշխատանքները, ի՞նչ են պատմում իրենց ժամանակների մասին: Քննարկել, թե ինչպես, ինչով և ինչու են ստեղծագործում արվեստագետները: Ուսումնասիրել կինոարվեստը որպես գիտության և տեխնիկայի ինտեգրման արդյունք, նրա ծագումը և զարգացումը, համր կինո, 20-րդ դարի համաշխարհային կինո, հայկական կինո: Գեղարվեստական ժառանգության ուսումնասիրություն ժողովրդական արվեստի կամ տեղական երկրագիտական թանգարաններում: Հանդես գալ հաղորդումներով և զեկույցներով՝ ներկայացնելով հստակ և խոսք, հայտնել տեսակետ և դրսևորել</p>	<p>Անհատական և մշակութային արժեհամակարգ Ուսումնասիրել և բացահայտել գաղափարներ, համոզմունքներ, արժեքներ, զգացումներ, մշակութային դրսևորումներ արտահայտող ուղիները, որոնցով արժևորվում և գնահատվում է ստեղծարարությունը: Համաշխարհայնացում Տեստական, քաղաքական, մշակութային համաշխարհային քաղաքակրթության զարգացման ժամանակակից փուլ, միասնական աշխարհի կայացման օբյեկտիվ գործընթաց, մարդու ստեղծած համակարգերի և համայնքների փոխկապակցվածություն, համաշխարհային և տեղական գործընթացների փոխ-հարաբերություններ, հնարավորություններ, որոշումների ազդեցությունը մարդկության և շրջակա միջավայրի վրա:</p>
--	---	--

	հետաքրքրություններ	
Առաջարկվող թեմատիկա		
Կենցաղային առարկաները և գործիքները տարբեր ժամանակաշրջանների արվեստում. Զին Յոռմ, Վերածնունդ, բարոկկո, ժամանակակից ոսկերչական, արծաթագործական իրեր, սպասք, վարագույր, կահույք, երաժշտական գործիքներ: Կինոարվեստ		
Միջառարկայական կապ		
<p>Բնագիտական առարկաներ - վերլուծել բնական համակարգերի փոխկապակցվածությունը՝ դիտարկելով բնագիտական գիտելիքը որպես մեկ ամբողջություն:</p> <p>Հանրահաշիվ, երկրաչափություն - համադրել և վերլուծել տարբեր մաթեմատիկական մոդելներ ծանոթ և անծանոթ իրավիճակներում, կիրառել տարածական մարմինների մասին գիտելիքները կյանքում և տարբեր ուսումնական առարկաներ ուսումնասիրելիս:</p> <p>Հումանիտար առարկաներ - վերլուծել իր ազգի ձևավորման և զարգացման պատմական ուղին, քաղաքացու դիրքից արժևորել Հայաստանի Հանրապետությունը որպես իր ներկան և ապագան կերտելու միջավայր: Համեմատել և վերլուծել հասարակական, քաղաքական երևույթների և գործընթացների տարբեր մեկնաբանություններ, արտահայտել հիմնավորված դիրքորոշում դրանց վերաբերյալ:</p> <p>Առողջ ապրելակերպ - բացատրել տեխնոլոգիական նորամուծությունների գիտական հիմքերը, ներկայացնել տեխնոլոգիական ձեռքբերումները որպես գիտական և հետազոտական մտքի արգասիք, գիտակցել դրանց հետ կապված հնարավոր վտանգները բնության և մարդու համար:</p> <p>ԹԳՅԳ - կիրառել համալիր գիտելիքներ և անհրաժեշտ հմտություններ՝ տեխնոլոգիական զարգացման և տեղեկատվության բազմազանության պայմաններում կողմնորոշվելու համար:</p>		
Կապը ՀԴԶ վերջնարդյունքների հետ		
Մ1, Մ4, Մ6, Մ10, Մ11, Մ12, Մ13, Մ14, Մ15, Մ16, Մ23, Մ24, Մ27, Մ28, Մ29, Մ34, Մ40, Մ41		

ԱՐՎԵՍՏԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄ	
ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ	
Նպատակը	Վերջնարդյունքներ
Ստեղծագործությունն իբրև թեմատիկ-իմաստային միասնությունն ընկալելու կարողությունների ձևավորում:	10.Ա. Ս.ՆՄ.2. Ձևակերպումներում կիրառել մասնագիտական բառամթերք և

<p>Ինքն իրեն լսելու և միտքը ճիշտ ձևակերպելու կարողությունների զարգացում:</p>	<p>Եզրույթներ:</p> <p>10.Ա. Ա.ՔԱ.1. Տարբեր ստեղծագործությունների վերաբերյալ ձևավորել մասնագիտական քննադատական կարծիքներ:</p> <p>10.Ա. Ա.ՔԱ.2. Քննարկել և վերլուծել տարբեր ժամանակներում ստեղծված նախագծերը, դրանց թողած հասարակական ազդեցությունը:</p> <p>10.Ա. Ա.Գ.1. Վերլուծել տարբեր արվեստագիտական գնահատականներ արդիականության, մշակութային արժևորման տեսանկյունից:</p> <p>10.Ա. Ա.Գ.2. Գնահատել նախագծերը՝ հաշվի առնելով հասարակության տարբեր խավերի գեղագիտական նախընտրությունները:</p> <p>10.Ա. Ա.ԱՊ.1. Ձևակերպել և ներկայացնել արվեստի բնագավառում առկա հիմնական միտումները: Քննարկել, թե ինչպես են ժամանակը, տեղը և մշակույթն արտացոլվում առանձին ստեղծագործություններում:</p> <p>10.Ա. Ա.ԱՊ.2. Ներկայացնել հայկական և համաշարհային արվեստի առանձնահատկությունները (ընդհանուր միտումները, ընդհանրություններն ու տարբերությունները):</p> <p>10.Ա. Կ.ԱԴ.3. Ստեղծագործաբար մոտենալ առօրեական խնդիրների լուծմանը:</p>
<p>Դասընթացի ուսումնասիրության արդյունքում սովորողը կկարողանա՝</p>	
<p>Կատարել արվեստագիտական եզրույթների խմբավորում, ըստ առաջըրված չափանիշների:</p> <ol style="list-style-type: none"> 1. Ստեղծել եզրույթները ներկայացնող պաստառներ, պահպանել տառերի և բառերի ներկայացման համաչափությունները, պահպանել դեկորատիվ արտահայտչականությունը: 2. Կատարել կերպարվեստի գործունեությանն առնչվող նյութերի մասնագիտական վերլուծություններ, թարգմանություններ: 3. Դասակարգել աշխատանքները, հաշվի առնելով ընդհանուր կարծիքը և գնահատականները: 4. Աշխատանքներում ցուցադրել մյուս ուսումնական առարկաներից ստացած գիտելիքները: 5. Քննել, վերլուծել և ներկայացնել ստեղծագործություններում առկա կապը արվեստի մյուս տեսակների հետ: 6. Բացահայտել և մեկնաբանել գեղարվեստական գաղափարը հաղորդելու գեղարվեստական հնարները: 7. Վերլուծել արվեստի ստեղծագործությունները, կիրառել քննական վերաբերմունք տեսածի և զգացածի նկատմամբ 8. Մանրամասն ներկայացնել ինքնուրույն, զույգով կամ խմբով կատարված աշխատանքները: Թվարկել կիրառված տարրերն ու սկզբունքները, և դրանցով արտահայտչականությունն ապահովելու հնարները: 9. Բանավոր կամ գրավոր ներկայացնել աշխատանքների հիմնական առանձնահատկությունները, դրանց կապը իրականության հետ 	

(փոխանցում են, ազդում, նկարագրում, ահազանգում են, կամ կարող են ներագրել, ուղղորդել և այլն):

10. Ընտրել շրջապատող իրականությունը արվեստի միջոցով ներկայացնելու տարբերակներ:
11. Կատարել վերլուծություններ և հետազոտություններ, մշակութային իրադարձության նշանակալիության, կարևորության վերաբերյալ:
12. Հավաքագրել և դասակարգել մշակութային իրադարձության, կամ ստեղծագործության վերաբերյալ արտահայտված կարծիքները:
13. Քննել ստեղծագործությունները՝ հաշվի առնելով թեմատիկան, ժամանակաշրջանը, նկարչի անհատականությունը, ավանդույթները, մշակութային խնդիրները, փաստացիությունը և այլն:
14. Ներկայացնել լրորչակի ժամանակաշրջանում ստեղծագործած հայազգի արվեստագետների աշխատանքները:
15. Բացատրել, թե ինչ միջոցներով և որքանով է արտացոլված տվյալ ժամանակաշրջանը:
16. Հասկանալ, որ բոլոր մշակույթները ներկայանում են իրենց արվեստով:
17. Հասկանալ, որ արվեստը բոլոր ժամանակների և մշակույթների հաղորդակցման անփոխարինելի լեզու է:
18. Ներկայացնել մշակութային իրադարձություն, որը ներգործություն է ունեցել (դրական կամ բացասական) իր շրջապատի վրա:

Բովանդակություն	Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող հասկացություններ
<p>Ժամանակի, տարածաշրջանի, մշակույթի, գեղագիտական ընկալումների ազդեցությունն արվեստի ստեղծագործություններում:</p> <p>Հայ և համաշխարհային արվեստի ընդհանուր միտումները:</p> <p>Արվեստ և իրականություն:</p> <p>Արվեստագիտական նոր ուղղություններ:</p>	<p>Ներկայացնել համաշխարհային արվեստի կարևոր շրջանները:</p> <p>Ներկայացնել հայ արվեստի ժամանակաշրջանները և ճանաչված արվեստագետներին:</p> <p>Վերլուծել նրանց ստեղծագործությունները՝ ըստ տեսակների (ճարտարապետություն, դեկորատիվ-կիրառական արվեստ, մանրանկարչություն, գեղանկարչություն):</p> <p>Դասակարգել կերպարվեստի տարրերը և սկզբունքները տարբեր դարաշրջանների ստեղծագործություններում:</p> <p>Համեմատել տարբեր երկրների արվեստագետների աշխատանքներում ազգային ինքնություն արտահայտող պատկերները:</p> <p>Ուսումնասիրել ստեղծագործությունները՝ ըստ ոճական առանձնահատկությունների:</p> <p>Ուսումնասիրել ստեղծագործությունների ստեղծման հանգամանքները:</p> <p>Ուսումնասիրել արվեստագիտական հետազոտությունների ամենից ճանաչված հիշարժան աղբյուրները:</p> <p>Դիտել ստեղծագործությունները, ներկայացնել հիմնական գաղափարը:</p> <p>Ներկայացնել հայ արվեստի պատմական ակունքները:</p> <p>Ներկայացնել հայկական մանրանկարչության առանձնահատ-</p>	<p>Պատճառ և հետևանք</p> <p>Աշխատանքի բնույթ և արդյունք կապը. նյութը, չափը, խնդիրը, թեմաներն ազդում են աշխատանքի բնույթի վրա, ինչը տարբեր արդյունքներ է տալիս:</p> <p>Անհատական և մշակութային արժեհամակարգ</p> <p>գաղափարների, համոզմունքների, արժեքների զգացողությունների, մշակութային դրսևորումների արժևորում միջմշակութային արժեքների առնչությունների բացահայտում</p> <p>Կայունություն և փոփոխություն</p> <p>Կայունությունը միշտ մրցակցող</p>

կությունները:
 Հայկական խաչքարագործությունը՝ որպես արվեստի ինքնուրույն տեսակ:
 Բնակության վայրի, տարածքի, համայնքի ճարտարապետական կոթողները, հիշարժան վայրերը, մշակութային հաստատությունները ներկայացնող նախագծերի և հետազոտությունների կատարում:
 Ձևակերպել իր պատկերացումները մարդկության պատմության ընթացքում գեղագիտական իդեալի փոխակերպումների վերաբերյալ և հիմնավորել սեփական տեսակետն արվեստի տարբեր ուղղություններից բերված օրինակներով: Մեկնաբանել գեղագիտական իդեալ հասկացությունը, դրա հարաբերական բնույթը, համաշխարհային պատմության տարբեր շրջաններում գեղագիտական իդեալների առանձնահատկությունները, ճաշակի դերը իրականության գեղագիտական ընկալման մեջ:
 Ուսումնասիրել հասարակության զարգացման վրա արվեստի տարբեր ճյուղերի ազդեցությունը:
 Հավաքել և հետազոտել մշակույթների հիմնական առանձնահատկությունները բացահայտող հիմնավոր տեղեկատվությունը:
 Տարբեր պատմական իրադարձություններ ներկայացնող ստեղծագործությունների դիտում, երկիրը, սովորույթները ներկայացնող աշխատանքներում առանձնացնել բնորոշ տարրերը:
 Կատարել արվեստի ստեղծագործության չորս փուլային հետազոտություն:
 Ուսումնասիրել ժամանակակից արվեստի զարգացման միտումները:
 Ուսումնասիրել տարբեր ժողովուրդների կենցաղի և մշակույթի արտացոլումն արվեստում:
 Ուսումնասիրել և ներկայացնել ստեղծագործության պատկանելությունը՝ ըստ գեղարվեստական դպրոցի և շրջանի, ժամանակաշրջանին բնորոշ տեխնիկայի, ժամանակի հայտնի վարպետների ստեղծագործական ձեռագրերի և նրանց նախընտրած թեմաների:

գործոնների հաշվեկշիռն է: Դրա խախտումը համակարգը դուրս է բերում կայուն վիճակից, երբ բացակայում է հետադարձ կապը: Սակայն արվեստագիտական տեսանկյունից կարելի է ընկալել որպես մեկից ավելի համակարգերի առկայություն միևնույն ստեղծագործության մեջ: Այստեղ մեկ գործոնի փոփոխությունը չի խախտում համակարգը, քանի որ մյուս գործոնն իր վրա է վերցնում ընդհանուր հավասարակշռությունը (գույն, գիծ, դինամիկա և այլն):

Առաջարկվող թեմատիկա
<i>Միջնադարյան Հայաստանի արվեստը, ժամանակակից արվեստի թանգարան, Ազգային պատկերասրահ, Սփյուռահայ արվեստ:</i>
Միջառարկայական կապ
<p>Բնագիտական առարկաներ - վերլուծել բնական համակարգերի փոխկապակցվածությունը՝ դիտարկելով բնագիտական գիտելիքը որպես մեկ ամբողջություն:</p> <p>Հանրահաշիվ, երկրաչափություն - համադրել և վերլուծել տարբեր մաթեմատիկական մոդելներ ծանոթ և անծանոթ իրավիճակներում, կիրառել տարածական մարմինների մասին գիտելիքները կյանքում և տարբեր ուսումնական առարկաներ ուսումնասիրելիս:</p> <p>Հումանիտար առարկաներ - վերլուծել իր ազգի ձևավորման և զարգացման պատմական ուղին, քաղաքացու դիրքից արժևորել Հայաստանի Հանրապետությունը որպես իր ներկան և ապագան կերտելու միջավայր: Համեմատել և վերլուծել հասարակական, քաղաքական երևույթների և գործընթացների տարբեր մեկնաբանություններ, արտահայտել հիմնավորված դիրքորոշում դրանց վերաբերյալ:</p> <p>Առողջ ապրելակերպ - բացատրել տեխնոլոգիական նորամուծությունների գիտական հիմքերը, ներկայացնել տեխնոլոգիական ձեռքբերումները որպես գիտական և հետազոտական մտքի արգասիք, գիտակցել դրանց հետ կապված հնարավոր վտանգները բնության և մարդու համար:</p> <p>ԹԳՅԳ - կիրառել համալիր գիտելիքներ և անհրաժեշտ հմտություններ՝ տեխնոլոգիական զարգացման և տեղեկատվության բազմազանության պայմաններում կողմնորոշվելու համար:</p>
Կապը ՀԴԶ վերջնարդյունքների հետ
Մ1, Մ4, Մ7, Մ10, Մ11, Մ15, Մ16, Մ17, Մ24, Մ28, Մ33, Մ34, Մ40, Մ41, Մ42

ԱՐՎԵՍՏԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄ	
ԱՐՎԵՍՏԻ ԴԵՐԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ	
Նպատակը	ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ
<p>«Արվեստն արտահայտում է իրականությունը» արտահայտության նկատմամբ վերաբերմունքի ձևավորում:</p> <p>Արվեստի միջոցով պատմական, մշակութային, հիշարժան իրադարձությունների արտահայտումն ուսումնասիրելու հմտությունների ձևավորում</p> <p>«Արվեստը կարող է ազդեցություն ունենալ մեր իրականության վրա» գաղափարի գիտակցության և դիրքորոշման ձևավորում:</p>	<p>10.Ա. Ս.ՆՄ.2. Ձևակերպումներում կիրառել մասնագիտական բառամթերք և եզրույթներ:</p> <p>10.Ա. Ա.ԲԱ.2. Քննարկել և վերլուծել տարբեր ժամանակներում ստեղծված նախագծերը, դրանց թողած հասարակական ազդեցությունը:</p> <p>10.Ա. Ա.Գ.1. Վերլուծել տարբեր արվեստագիտական գնահատականներ արդիականության, մշակութային արժևորման տեսանկյունից:</p> <p>10.Ա. Ա.Գ.2. Գնահատել նախագծերը՝ հաշվի առնելով հասարակության</p>

<p>Ուղղորդող հարցադրում</p> <p>Ինչպե՞ս է արվեստն օժանդակում ստեղծագործական մտածողության զագացմանը: Արվեստն ունի՞ տարիք: Որտե՞ղ կիրառել արվեստի վերաբերյալ գիտելիքները:</p>	<p>տարբեր խավերի գեղագիտական նախընտրությունները:</p> <p>10.Ա. Կ.ԱԴ.1. Ներկայացնել, թե որքանով է մշակույթի, պատմության, ավանդությունների և սովորույթների իմացությունն օգնում լիարժեք ընկալելու ստեղծագործությունը:</p> <p>10.Ա. Կ.ԱԴ.2. Լուսաբանել միևնույն մշակութային իրադարձությունը տարբեր մեդիաների համար (հեռուստատեսություն, տպագիր մամուլ, համացանց և այլն):</p> <p>10.Ա. Կ.ԱԴ.3. Ստեղծագործաբար մոտենալ առօրեական խնդիրների լուծմանը:</p>
---	--

Դասընթացի ուսումնասիրության արդյունքում սովորողը կկարողանա՝

1. Կատարել արվեստագիտական եզրույթների խմբավորում, ըստ առաջադրված չափանիշների:
2. Կատարել ստեղծագործական գործունեության առնչվող եզրույթների մասնագիտական վերլուծություններ, թարգմանություններ:
3. Ստեղծել եզրույթները ներկայացնող պաստառներ, պահպանել տառերի և բառերի ներկայացման համաչափությունները, պահպանել դեկորատիվ արտահայտչականությունը:
4. Կատարել կերպարվեստային գործունեության հետ առնչվող նյութերի մասնագիտական վերլուծություններ, թարգմանություններ:
5. Դասակարգել աշխատանքները, հաշվի առնելով ընդհանուր կարծիքը և գնահատականները:
6. Աշխատանքներում ցուցադրել մյուս ուսումնական առարկաներից ստացած գիտելիքները:
7. Քննել, վերլուծել և ներկայացնել ստեղծագործություններում առկա կապը արվեստի մյուս տեսակների հետ: Ներկայացնել, թե ինչո՞վ է արվեստի ստեղծագործությունը նման կամ տարբեր իրականությունից, և որքանով է ազդում մարդկաց վրա:
8. Բերել արվեստի բնագավառը ներկայացնող մասնագիտությունների օրինակներ:
9. Ներկայացնել մշակութային հաստատություններում ընդունված վարքականոնները տարբեր ժամանակներում:
10. Քննարկել և ներկայացնել արվեստի դերը իր համայնքում:
11. Քննարկել արվեստագետ դառնալու հնարավորությունները:
12. Ներկայացնել մշակութային իրադարձություն, որը ներգործություն է ունեցել (դրական կամ բացասական) իր շրջապատի վրա:

Բովանդակություն	Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող հասկացություններ
<p>Մշակույթի, պատմության, ավանդությունների և սովորույթների իմացությունը և հանդիսատեսը: Մշակութային իրադարձության լուսաբանում տարբեր մեդիաների համար՝ հեռուստատեսություն,</p>	<p>Չեռազուտել մեր իրականության մեջ արվեստի ներկայու-թյունը: Արվեստի ստեղծագործությունները որպես տեղեկատվու-թյան փոխանցման և հաղորդակցման միջոց: Չայ և համաշխարհային արվեստի փոխազդեցություննե-րը՝ ընդհանրություններ, տարբերություններ:</p>	<p>Պատճառ և հետևանք Աշխատանքի բնույթ և արդյունք կա-պը. նյութը, չափը, խնդիրը, թեմաներն ազդում են աշխատանքի բնույթի վրա, ինչը տարբեր արդյունքներ է տալիս:</p>

<p>տպագիր մամուլ, համացանց և այլն: Իրականության ստեղծագործական ընկալում:</p>	<p>Քննարկել արվեստի դերը: Արվեստի ստեղծագործությունների վերաբերյալ համառոտ ակնարկների պատրաստում: Տարբեր մեդիաների լուսաբանումների ձևաչափերի, խոսքի կառուցվածքի, արդիականության, կառուցվածքային առանձնահատկությունների ուսումնասիրություններ: Համեմատել և վերլուծել միևնույն մշակութային իրադարձության լուսաբանումը տարբեր մեդիաների միջոցով (հեռուստատեսություն, տպագիր մամուլ, համացանց և այլն): Ուսումնասիրել և ներկայացնել կարճ ակնարկներ հայ մշակույթի վրա օտար ազդեցության հիմնական միտումների, ազգային մշակույթի ձևավորման վրա խորհրդանիշների դերի վերաբերյալ: Արվեստի ազդեցությունը քաղաքակրթությունների վրա: Հասարակության սոցիալական նորմերը խորհրդանշող արվեստագիտական արտահայտություններն անցյալում և ներկայում: Ուսումնասիրել արվեստագետների դերը: Որոշել նրանց գործունեության առանձնահատկությունները և կարևորությունը: Ուսումնասիրել որևէ իրադարձություն ընտանիքում, համայնքում, երկրում, աշխարհում, որին անդրադարձել է արվեստը: Ներկայացնել որևէ մշակութային իրադարձության կամ արվեստի հետ առնչության սեփական օրինակ: Արվեստի մասին պատմող տեսաֆիլմերի քննարկումներ:</p>	<p>Կայունություն և փոփոխություն Կայունությունը միշտ մրցակցող գործոնների հաշվեկշիռն է: Դրա խախտումը համակարգը դուրս է բերում կայուն վիճակից, երբ բացակայում է հետադարձ կապը: Սակայն արվեստագիտական տեսանկյունից կարելի է ընկալել որպես մեկից ավելի համակարգերի առկայություն միևնույն սրեղծագործության մեջ: Այստեղ մեկ գործոնի փոփոխությունը չի խախտում համակարգը, քանի որ մյուս գործոնն իր վրա է վերցնում ընդհանուր հավասարակշռությունը:</p> <p>Համաշխարհայնացում տնտեսական, քաղաքական, մշակութային համաշխարհային քաղաքակրթության զարգացման ժամանակակից փուլ, միասնական աշխարհի կայացման օբյեկտիվ գործընթաց, մարդու ստեղծած համակարգերի և համայնքների փոխկապակցվածություն, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերություններ, հնարավորություններ, որոշումների ազդեցությունը մարդկության և շրջակա միջավայրի վրա:</p>
--	---	--

Առաջարկվող թեմատիկա

Ի՞նչ է արվեստը պատմում անցյալի մասին: Արվեստն ունի՞ տարիք:
Արվեստի մասին գիտելիքը, ինչի՞ համար է այն:
Արվեստ և ստեղծագործություն. պատճեն, ոգեշնչում կամ նորարարություն:
Ներգրավվածությունը արվեստում, երբ արվեստը ծառայում է սոցիալական և քաղաքական պահանջներին:
Հայտնի ստեղծագործությունների ժամանակակից ընկալումներ՝
Հայկական զարդարվեստ:
Գովազդ:

Միջառարկայական կապ

Բնագիտական առարկաներ- վերլուծել բնական համակարգերի փոխկապակցվածությունը՝ դիտարկելով բնագիտական գիտելիքը որպես մեկ ամբողջություն:

Հանրահաշիվ, երկրաչափություն - համադրել և վերլուծել տարբեր մաթեմատիկական մոդելներ ծանոթ և անծանոթ իրավիճակներում, կիրառել տարածական մարմինների մասին գիտելիքները կյանքում և տարբեր ուսումնական առարկաներ ուսումնասիրելիս:

Հումանիտար առարկաներ- վերլուծել իր ազգի ձևավորման և զարգացման պատմական ուղին, քաղաքացու դիրքից արժևորել Հայաստանի Հանրապետությունը որպես իր ներկան և ապագան կերտելու միջավայր: Համեմատել և վերլուծել հասարակական և քաղաքական երևույթների և գործընթացների տարբեր մեկնաբանություններ, արտահայտել հիմնավորված դիրքորոշում դրանց վերաբերյալ:

Առողջ ապրելակերպ - բացատրել տեխնոլոգիական նորամուծությունների գիտական հիմքերը, ներկայացնել տեխնոլոգիական ձեռքբերումները որպես գիտական և հետազոտական մտքի արգասիք, գիտակցել դրանց հետ կապված հնարավոր վտանգները բնության և մարդու համար:

ԹԳՅԳ - կիրառել համալիր գիտելիքներ և անհրաժեշտ հմտություններ՝ տեխնոլոգիական զարգացման և տեղեկատվության բազմազանության պայմաններում կողմնորոշվելու համար:

Կապը ՀԴԶ վերջնարդյունքների հետ

Մ1, Մ4, Մ7, Մ10, Մ11, Մ15, Մ16, Մ17, Մ18, Մ24, Մ28, Մ30, Մ33, Մ34, Մ40, Մ41, Մ42